

# Ուսանողի ձեռնարկ

3

## Վերաբերմունքներ

Գնահատել և զարգացնել վերաբերմունքներ



Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար



---

---

# Վերաբերմունքներ

Գնահատել և զարգացնել վերաբերմունքներ

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսանողի ձեռնարկ

5-րդ խմբագրում



**Վերաբերմունքներ  
Ուսանողի ձեռնարկ  
5-րդ խմբագրում  
Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի**

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Attitudes, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ [www.iTeenChallenge.org](http://www.iTeenChallenge.org): Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Մտուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge  
PO Box 511  
Columbus, GA, 31902 USA  
Email: [gtc@globaltc.org](mailto:gtc@globaltc.org)  
Web: [www.globaltc.org](http://www.globaltc.org)  
[www.iTeenChallenge.org](http://www.iTeenChallenge.org)



## Բովանդակություն

<b>Գլուխ 1. Վերաբերմունքները նորադարձ քրիստոնյայի կյանքում: .....</b>	<b>4</b>
Ա. Ի՞նչ են վերաբերմունքները: .....	5
Բ. Ինչպե՞ս եմ ես օգտագործում վերաբերմունքները:.....	5
Գ. Ինչպե՞ս եմ ես վերաբերմունքներ ձեռք բերում: .....	6
Դ. Ինչպե՞ս եմ ես ցույց տալիս իմ վերաբերմունքը: .....	7
<b>Գլուխ 2. Նոր վերաբերմունքներ ձևավորելու ընթացքը: .....</b>	<b>8</b>
Ա. Իմ կյանքի ո՞ր ասպարեզներում ես կարիք ունեմ նոր վերաբերմունքներ զարգացնելու:.....	8
Բ. Որտեղի՞ց ես պետք է սկսեմ նոր վերաբերմունքներ զարգացնել: .....	9
Գ. Ի՞նչ մեթոդներ ինձ կօգնեն նոր վերաբերմունքներ զարգացնելու հարցում: .....	11
<b>Գլուխ 3. Ճիշտ վերաբերմունքներ ունենալ, երբ քեզ հանդիմանում են կամ քննադատում: .....</b>	<b>17</b>
Ա. Ինչո՞ւ են մարդիկ ինձ նեղացնում:.....	17
Բ. Աստվածաշնչյան ինչպիսի՞ վերաբերմունք պետք է ունենալ, երբ քեզ հանդիմանում են կամ քննադատում:.....	18
Գ. Որո՞նք են աստվածաշնչյան վերաբերմունք օգտագործելու օգուտները, երբ քեզ հանդիմանում են կամ քննադատում:.....	29
Դ. Այս վերաբերմունքի հետ կապված ի՞նչ խնդիրներ կան:.....	30
Ե. Ինչպե՞ս ես սկսեմ զարգացնել այս վերաբերմունքը: .....	33
Ունենալ աստվածաշնչյան վերաբերմունք, երբ ինձ հանդիմանում են կամ քննադատում: .....	34-35
<b>Գլուխ 4. Ունենալ ճիշտ վերաբերմունք ուրիշին հանդիմանելիս: .....</b>	<b>36</b>
Ա. Ո՞ւմ պետք է ես հանդիմանեմ:.....	36
Բ. Ինչպիսի՞ աստվածաշնչյան վերաբերմունք պետք է ունենալ մարդկանց հանդիմանելիս:.....	37
Գ. Ինչպե՞ս ես պետք է հանդիմանեմ մարդկանց: .....	40
Դ. Որո՞նք են ամենագլխավոր բաները մարդկանց հանդիմանելու հարցում: ..	48
Ե. Որո՞նք են աստվածաշնչյան սահմանափակումները մարդկանց հանդիմանելու հարցում: .....	49

# Գլուխ 1

## Վերաբերմունքները նորադարձ քրիստոնյայի կյանքում

Վերաբերմունքները նման են աղի: Մնունդը, որի մեջ ճիշտ քանակի աղ կա, լավ համ ունի: Դու ասում ես. «Այս միսը հրաշալի համ ունի»: Դու երբեք լսե՞լ ես, որ ինչ-որ մեկն ասի. «Այս մսի աղը շատ համեղ է»: Երբ աղը ճիշտ քանակով է օգտագործվում, այն իր վրա ուշադրություն չի գրավում: Սակայն դրա ազդեցությունը հստակ է, հասկապես, եթե համեմատենք աղ արված սնունդը աղ չարված սննդի հետ:

Մեր վերաբերմունքները մեծ ազդեցություն ունեն մեր կյանքի վրա: Մենք, հնարավոր է, չկարողանանք մեր վերաբերմունքները վերլուծել ամենօրյա կիրառման հիման վրա, սակայն դրանց ազդեցությունը հստակ տեսանելի է: Մեր խոսակցությունն ու քայլերը բացահայտում են մեր վերաբերմունքները:

Նորադարձ քրիստոնյաները, ովքեր ուզում են հոգևորապես աճել, պետք է գնահատեն իրենց վերաբերմունքները: Ինչքանով էն իմ վերաբերմունքներն աստվածաշնչյան: Դրանցից որո՞նք պետք է փոխվեն: Ո՞ր վերաբերմունքներն են նորադարձ քրիստոնյայի կյանքում ամենակարևորը: Ինչպե՞ս կարող եմ սկսել փոխել իմ վերաբերմունքները:

Այս հարցերը, հնարավոր է, պարզ պատասխաններ չունենան, սակայն Աստվածաշունչը մեզ տալիս է որոշ հստակ ուսուցումներ մեր մտքերի և վերաբերմունքների վերաբերյալ: Աստված մեզ շատ պարզ խորհուրդ է տալիս, թե ինչպես պետք է մեր վերաբերմունքներն ու մտքերը շարունակ փոխվեն դեպի ավելի լավը:

**Եփեսացիներին 4:23. «Նորոգվեցե՛ք ձեր մտքի հոգով»:**

**Մեր մտքերը և վերաբերմունքները պետք է հոգևորապես նորոգվեն:**

Այս դասընթացում մեր հիմնական նպատակն է՝ հիմք կառուցել նոր վերաբերմունքների համար: Քրիստոսակերպ վերաբերմունքներ ձևավորելու գործընթացը կշարունակվի մինչև մեր կյանքի վերջը: Սույն դասընթացով մենք պարզապես ուզում ենք սկսել այս գործընթացը:

## Ա. Ի՞նչ են վերաբերմունքները:

«Վերաբերմունք»: Սա սովորական բառ է, սակայն շատ մարդիկ կդժվարանան բացատրել դրա իմաստը: Հոգեբանը, հնարավոր է, քեզ շատ խճճված սահմանում տա: Սակայն կան մի քանի սահմանումներ, որոնք օգնում են հասկանալ այս բառը, դրանք են.

1. Մտածելակերպ
2. Կարծիք
3. Մտածելու պատկեր
4. Մտածելու սովորություն
5. Տեսակետ
6. Մտքեր, որ ես սովորել եմ
7. Մտային դիրք ինչ-որ փաստի կամ իրավիճակի վերաբերյալ:  
(*Webster's Seventh New Collegiate Dictionary*)

Հնարավոր է՝ դու լսել ես, որ ինչ-որ մեկը «վերաբերմունք» բառն օգտագործել է Կարոյի նման: Կարոն նայում էր, թե ինչպես էին Դիանան և Քրիստինեն իրար հետ վիճում, թե ում հերթն էր ննջասենյակը մաքրելու: «Դիա՛ն, ի՛նչ էլ վերաբերմունք ունես», - ընդհատեց Կարոն նրանց:

Իրականում Կարոն նկատի ուներ, որ Դիանայի վերաբերմունքն այդ պահին վատն էր: Այս դասընթացին մենք «վերաբերմունք» բառը չենք օգտագործի այն իմաստով, ինչ որ Կարոն օգտագործեց: Վերաբերմունքը կարող է լինել լավ կամ վատ: Ցանկացած մեկը վերաբերմունքներ ունի: Մենք դրանք ամեն օր ենք կիրառում:

Վերաբերմունքները նո՞ւյնն են, ինչ զգացմունքները: Ո՛չ, դրանք իրականում նույնը չեն: Զգացմունքները մտքերը չեն: Բայց և այնպես, մտածելակերպը (վերաբերմունքը), որ մենք ունենք աշխատանքի հանդեպ, սովորաբար իր մեջ զգացմունքներ է ներառում: Օրինակ, եթե ատում ես աշխատանքը, ապա նեղվածության, բարկության կամ զզվանքի զգացմունքները կարող են միանալ մտքերին (վերաբերմունքին), որ դու ունես քո աշխատանքի հանդեպ: Եթե սիրում ես քո աշխատանքը, ապա, հավանաբար, ուրախության զգացմունքներ կառաջանան, երբ աշխատանքի գնալիս լինես:

## Բ. Ինչպե՞ս եմ ես օգտագործում վերաբերմունքները:

«Ինչպե՞ս եմ իմ վերաբերմունքներն ազդում իմ առօրյա կյանքի վրա»:  
Քո մտածելակերպն ուղիղ ազդեցություն ունի այն բանի վրա, թե ինչպես ես վերաբերվում քո ամենօրյա կյանքում: Դու օգտագործում ես քո վերաբերմունքները, որպեսզի որոշես, թե ինչ ես մտածելու, ասելու և անելու՝ ի պատասխան առօրյա իրավիճակների:

Մեկ ուրիշ հարց մեզ կարող է օգնել, որպեսզի հասկանանք այս թեման.  
«Ինչո՞ւ են ինձ պետք վերաբերմունքները»: Դրանք օգնում են կյանքը  
հեշտացնելուն քո ուղեղի համար: Մենք յուրաքանչյուր օր մեծ աշխատանք ենք  
կատարում՝ անելով բաներ, որոնք նախկինում շատ անգամ ենք արել. արթնանալ,  
աշխատել, ուտել, մեր գործն անել, ապրել մեր ընտանիքի կամ ընկերների հետ:

Մեր վերաբերմունքները, մեր մտածելակերպը մեզ օգնում են որոշել, թե ինչպես  
ենք մենք արձագանքելու ամենօրյա իրավիճակներին: Մենք շատ հաճախ  
գիտակցաբար չենք մտածում, թե ինչ ենք պատասխանելու, երբ մեզ կանչեն հաց  
ուտելու: Մեծամասնությունը դրական կպատասխանի այս կանչին, հատկապես,  
եթե քաղցած է, իսկ սնունդն էլ անուշ բուրում է:

## Գ. Ինչպե՞ս եմ ես վերաբերմունքներ ձեռք բերում:

Վերաբերմունքներ ձևավորելու ընթացքը քեզ մոտ սկսվել է դեռ վաղ  
մանկությունից: Քո առօրյա ապրումները մեծ ազդեցություն են ունեցել քո  
վերաբերմունքների ձևավորման վրա: Որպես երեխա, հնարավոր է, դու շատ  
բան վերցրել ես քո ծնողների վերաբերմունքներից: Քո եղբայրները, քույրերը և  
հարազատները նույնպես մեծ ազդեցություն են ունեցել քո կարծիքների  
ձևավորման վրա:

Հեռուստացույցը, ռադիոն, ֆիլմերը, համակարգիչները, քո տանն ու  
համայնքում եղած մյուս իրերը և տարբեր մարդիկ մաս են կազմում՝ նպաստելով  
քո վերաբերմունքների ձևավորմանը: Երբ դու սկսել ես դպրոց գնալ, քո  
ուսուցիչները, դասընկերները, ուսումնասիրած առարկաները հստակորեն ազդել  
են քո մտածելակերպի վրա:

Ինչպե՞ս մարդը կարող է վերաբերմունքներ ձևավորել:

Կան տարբեր բաներ, որոնցով դու կարող ես քո կյանքում վերաբերմունքներ  
ձևավորել: Ահա՛ դրանցից մի քանիսը.

1. Քո առօրյա փորձառության արդյունքում:
2. Դու դրանք սովորում ես մյուս մարդկանց նայելով:
3. Այն քեզ սովորեցնում են:
4. Դու կարող ես նոր մտածելակերպ ուսումնասիրել և անգիր անել:

Մեր վերաբերմունքները փոխվո՞ւմ են: Ամեն օր մենք նոր փորձառություն ենք  
ունենում: Դրանք կարող են օգնել մեր վերաբերմունքների ամրապնդմանը կամ՝  
ընդհակառակը: Եթե արձագանքելու քո ձևը դժվարացնում է քո կյանքը և  
բազմաթիվ դժվարություններ ստեղծում քեզ համար, դու, ամենայն  
հավանականությամբ, կփոխես քո վերաբերմունքը: Մենք սովորաբար փոխում  
ենք մեր վերաբերմունքները, որպեսզի հեշտացնենք կյանքը մեզ համար:



Կարևոր է տեսնել, որ դու պատասխանատու ես քո վերաբերմունքների համար: Եթե անզամ որևէ տեսակետ ձեռք ես բերել քո վաղ մանկությունից, դու, միննույն է, պատասխանատու ես դրա համար: Դու չես կարող մեղադրել քո ծնողներին, ուսուցիչներին կամ շրջապատին: Աստծո օգնությամբ կարող ես փոխել քո ունեցած ցանկացած վերաբերմունք:

## **Դ. Ինչպե՞ս եմ ես ցույց տալիս իմ վերաբերմունքը:**

Վերաբերմունքը մտածելակերպն է: Ես չեմ կարող տեսնել քո մտքերը, իսկ դու՝ իմը: Ուրեմն, ինչպե՞ս ենք մենք ցույց տալիս մեր վերաբերմունքները:

Առաջին հերթին՝ լսի՛ր, թե դիմացինդ ինչ է ասում: Դու կարող ես հասկանալ, թե դիմացինդ ինչ է մտածում, եթե լսես, թե ինչ է նա ասում կամ չի ասում տվյալ հարցի վերաբերյալ: Եթե ուզում ես ավելին իմանալ նրա վերաբերմունքի մասին, ապա հարցե՛ր տուր, իսկ հետո ուշադիր լսի՛ր:

Մենք մեր վերաբերմունքը ցույց ենք տալիս նաև մեր ձայնի տոնայնությամբ, շարժումով՝ ինչպես ենք մենք կանգնում կամ նստում, կամ բռունցքները սեղմում: Մարդու դեմքին նայելը նույնպես կարող է շատ բան ասել նրա վերաբերմունքի մասին: Խոժոռվո՞ւմ է նա, թե՞ ժպտում: Նրանց աչքերը լցված են բարության՞ մբ, թե՞ նրանք իրենց աչքերով նետեր են արձակում քեզ վրա:

## Գլուխ 2

### Նոր վերաբերմունքներ ձևավորելու ընթացքը

Դու երբևէ եղե՞լ ես մի իրավիճակում, երբ չես կարողացել խոսել: Անհարմար ես զգացել, կամ վախեցել ես, քանի որ չես իմացել, թե ինչ ասես կամ անես:

Երբ դու հայտնվում ես միանգամայն նոր իրավիճակում, քո ուղեղն ասում է. «Սպասի՛ր մի րոպե: Ես ոչ մի պատրաստի վերաբերմունք չունեմ, որ քեզ ասեմ, թե ինչպես արձագանքես»: Այնպես որ, դու արագ գնահատում ես իրավիճակն ու որոշում կայացնում, թե ինչպես ես արձագանքելու:

Եթե նորից ու նորից հանդիպես նույն իրավիճակին, դու, ենթադրվում է, հստակ կանխատեսելի մի վերաբերմունք կզարգացնես դրա հանդեպ: Քո նոր վերաբերմունքը կդառնա կոնկրետ հիմնավորված:

### Ա. Իմ կյանքի ո՞ր ասպարեզներում ես կարիք ունեմ նոր վերաբերմունքներ զարգացնելու:

Նորադարձ քրիստոնյաները հաճախ ունենում են վերաբերմունքներ, որոնք չեն համապատասխանում այն ձևին, որ Քրիստոսն է ուզում, որ մենք ապրենք: Փիլիպպեցիներին 2:5-ն ասում է. «Նույն միտքը թող լինի ձեր մեջ, ինչ Քրիստոս Հիսուսի մեջ էր»: Ինչպիսի՞ վերաբերմունքներ էր Հիսուսը զարգացրել: Ո՞րն է ամենակարևոր վերաբերմունքը, որ նորադարձ քրիստոնյաները պետք է զարգացնեն: Այս դասընթացի ժամանակ մենք կքննարկենք աստվածաշնչյան մի քանի համարներ, որոնք ասում են, թե ինչ բաներ պետք է հանենք մեր կյանքից, և ինչ նոր բաներ, որոնք Աստված ուզում է, պետք է գան մեր կյանք: Շատ դեպքերում դա նշանակում է՝ ձերբազատվել հին մտածելակերպից և դրանք փոխարինել նոր վերաբերմունքով:

Ստուգի՛ր քո դասարանական նշումները՝ Եփեսացիներին 4:17-32 և Կողոսացիներին 3:5-15 հատվածներում նշված վերաբերմունքների շուրջ: Ահա՛ մի քանի ասպարեզներ, որտեղ նորադարձ քրիստոնյաները նշել են, որ կարիք ունեն նոր վերաբերմունքներ զարգացնելու.

1. Ձերբազատվեմ հպարտությունից:
2. Հասկանալով քննադատեմ կամ խորհուրդ տամ:
3. Մարդկանց հետ հարգանքով վերաբերվեմ:
4. Սովորեմ սիրել մարդկանց:
5. Ընդունեմ սեփական սխալս:
6. Սովորեմ վստահել Տիրոջը, երբ դժվարություններ և խնդիրներ ունենամ:
7. Աշխատեմ:
8. Ճիշտ վերաբերվեմ իմ ընտանիքի հանդեպ:
9. Ինտիմ կյանքի հանդեպ ճիշտ վերաբերմունք ունենամ:
10. Հնազանդվեմ ղեկավարներին:
11. Ընդունեմ ինքս ինձ:
12. Փոխեմ իմ վերաբերմունքը թմրանյութ օգտագործելու վերաբերյալ:
13. Ներեմ մարդկանց:

Նոր մտածելակերպ զարգացնելը կարող է քեզ համար հեշտ լինել: Մակայն եթե դժվարանաս, հիշի՛ր, որ Աստված խոստացել է քեզ ուժ և իմաստություն տալ՝ անելու այն, ինչ Նա է ուզում, որ անես:

#### **Փիլիպպեցիներին 4:13.**

**«Ես կարող եմ ամեն ինչ անել Քրիստոսի միջոցով, որ զորացնում է ինձ»:**

#### **Հակոբոս 1:5-6.**

**«Եթե ձեզանից մեկն իմաստության պակասություն ունենա, թող խնդրի Աստծուց, որ բոլորին տալիս է առատորեն և չի հանդիմանում, ու նրան կտրվի: Միայն թե թող հավատով խնդրի, առանց երկմտելու, քանի որ երկմտողը նման է ծովի հողմակոծ, տարուբերվող ալիքներին»:**

## **Բ. Որտեղի՞ց ես պետք է սկսեմ նոր վերաբերմունքներ զարգացնել:**

Մարդիկ տարբեր ձևով են մտածում: Աստված քեզ ստեղծել է բանականությամբ և քեզ պատասխանատվություն է տվել այն զարգացնելու համար: Հռոմեացիներին 12:2-ում, որ մեջբերում է արված ներքևում, Աստված քեզ է տալիս նոր վերաբերմունքներ զարգացնելու պատասխանատվություն: Ինչպե՞ս կարող ես հաջողության հասնել այս հարցում: Դա ժամանակ և աշխատանք է պահանջում:

Հռոմեացիներին 12:2-ը մեզ խորհուրդ է տալիս, թե ինչպես նոր վերաբերմունքներ զարգացնենք: «Եվ մի՛ կերպավորվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որ քննեք, թե ո՞րն է Աստծո կամքը՝ բարին, ընդունելին և կատարյալը» (Հռոմեացիներին 12:2):

Եփեսացիներին 4:23-ը մեզ ասում է, թե ինչ պետք է անենք. «Նորոգվեցե՛ք ձեր մտքի հոգով» (Եփեսացիներին 4:23):

Դժվար է փոխել մի վերաբերմունք, որ ունեցել ես քո կյանքի մեծ մասի ընթացքում: Աստված պատրաստ է օգնել քեզ: Այսպիսով, որտեղի՞ց սկսել:

## 1. Ո՞ր վերաբերմունքը ես պետք է փոխեմ:

Դու կարիք ունես որոշելու, թե որ վերաբերմունքն ես ուզում փոխել: Ասենք՝ դու ուզում ես փոխել քո վերաբերմունքն աշխատանքի հանդեպ:

## 2. Ի՞նչ մտքեր են ձևավորում իմ ներկա վերաբերմունքը տվյալ հարցի վերաբերյալ:

Առաջին հայացքից, սա կարող է հասարակ առաջադրանք թվալ: Բայց հաճախ մեր վերաբերմունքն այնքան ամուր է ձևավորված որպես մտավոր սովորություն, որ մենք չենք հասցնում գիտակցել, թե ինչ ենք մտածում տվյալ հարցի շուրջ: Այսինքն՝ արձագանքում ենք առանց գիտակցելու կամ մտածելու:

Նայի՛ր, թե ինչ ես դու մտածում քո աշխատանքի մասին: Ատո՞ւմ ես այն, թե՞ սիրում: Կամ գուցե չափից շատ ես սիրում այն: Քո գործողությունները, երբ դու աշխատում ես, ցույց են տալիս քո վերաբերմունքը. դու թափթփվա՞ծ ես, թե՞ պարտաճանաչ, դանդաղաշա՞րժ ես, թե՞ արագաշարժ, կայո՞ւն ես, թե՞ անվստահելի:

## 3. Ո՞ր եմ ես ուզում հասնել:

Ասենք թե, դու գիտես, որ քո ներկա վերաբերմունքն աշխատանքի հանդեպ այն չէ, ինչ Քրիստոսը կուզենար, որ ունենայիր: Սակայն ի՞նչ է իրենից ներկայացնում աստվածաշնչյան վերաբերմունքն աշխատանքի հանդեպ: Դու պետք է նպատակակետ ունենաս, եթե իմաստալից փոփոխություններ ես ակնկալում աշխատանքի հանդեպ քո վերաբերմունքի մեջ:

Աստվածաշնչյան ուսումնասիրությունն այս հարցում կարևոր կետ է հանդիսանում: Իմացի՛ր, թե Աստված ասելու ինչ ունի աշխատանքի վերաբերյալ: Առակների գիրքը շատ բան է ասում այս թեմայի առումով: Նոր Կտակարանի երկու համարներ ներառում են երկու հիմնական մտքեր, որոնք կարող են քեզ օգնել իմանալու, թե որոնք են աշխատանքի հանդեպ աստվածաշնչյան վերաբերմունքի կարևոր բաղադրիչները:

**Կողոսացիներին 3:23.**

**«Եվ ինչ որ անեք, սրտա՛նց արեք, որպես թե Տիրոջ համար և ոչ թե՛ մարդկանց»:**

**Բ Կորնթացիներին 8:11.**

**«Արդ, ավարտի՛ն հասցրեք սա, որպեսզի ինչպես հոժարությամբ սկսել եք, այնպես էլ ձեր ունեցածի չափով կատարեք»:**

Քեզ համար կարող է օգտակար լինել՝ գրի առնել քո մտքերն այն հիմնական խորհուրդների շուրջ, որոնք ձևավորում են աշխատանքի հանդեպ աստվածաշնչյան վերաբերմունքը:

#### **4. Ինչպե՞ս հասնեմ այնտեղ:**

Որո՞նք են այն կոնկրետ քայլերը, որոնք դու կանես, որպեսզի ազատվես աշխատանքի հանդեպ քո հին վերաբերմունքից և փոխարինես այն աստվածաշնչյանով: Մենք այդ մասին մի փոքր ուշ ավելի մանրամասն կքննարկենք այս գլխում: Այս փոփոխության ընթացքն ինքնաբերաբար չի կատարվի: Այն ժամանակ կպահանջի, աշխատանք և ուժեղ ինքնակառավարում:

Սուրբ Հոգին կօգնի քեզ: Քո ընկերներն ու ընտանիքն էլ կարող են քեզ օգնել, հատկապես, եթե դու նրանց բացատրես, թե ինչ ես փորձում անել:

#### **5. Ինչքա՞ն է մեծ իմ ցանկությունը՝ զարգացնելու համար աստվածաշնչյան այս վերաբերմունքը:**

Քեզ կարող է թվալ, որ վերաբերմունքի փոփոխության ընթացքը ցավալիորեն դանդաղ է տեղի ունենում (և՛ դանդաղ, և՛ ցավոտ): Կարող է գայթակղություն առաջանալ, որ պարզապես մի կողմ դնես ամեն բան և լինես «այնպիսին, ինչպիսին կաս»: Բայց Աստված մեզ ուղղված Իր ցուցումների մեջ շատ հստակ է. մենք պետք է մի կողմ թողնենք մեր հին սովորությունները, ցանկություններն ու վերաբերմունքները և մեզ վրա հագնենք նորը: Երբեմն աճելը կարող է ցավոտ լինել, սակայն ժամանակի ընթացքում վարձատրությունը միանգամայն արժևորում է մեր թափած ջանքը: Իրական հարստության տանող ճանապարհը սկսվում է աշխատանքի հանդեպ աստվածաշնչյան վերաբերմունքից:

#### **Գ. Ի՞նչ մեթոդներ ինձ կօգնեն նոր վերաբերմունքներ զարգացնելու հարցում:**

Ավելի հանգամանալից դիտարկենք մեր վերաբերմունքների փոփոխության երկու տարբեր մոտեցումները: Մենք կարող ենք սկսել մեր մտքերի փոփոխությունից, որը կբերի մեր գործողությունների փոփոխությանը: Կամ կարող ենք սկսել մեր գործողությունների փոփոխությունից, որը կբերի մեր մտքերի փոփոխությանը: Ո՞ր մոտեցումն է ավելի լավ: Դա կախված է նրանից, թե ինչպիսի անձնավորություն ես դու, և այն վերաբերմունքից, որ դու փորձում ես փոխել:

## 1. Փոխում եմ իմ գործողությունները:

Հովսեփը երբեք հիացած չի եղել իր աշխատանքով: Ցանկացած հարմար պահի մի կողմ էր թողնում այն՝ ինչքան հնարավոր է երկար ժամանակով: Ամեն անգամ, երբ գործի էր գնում, բողոքում էր: Հովսեփին ճանաչողներն ասում էին, որ նա շատ վատ է անում իր գործը: Հազվադեպ էին եղել դեպքերը, երբ Հովսեփը հետաքրքրվել է իր աշխատանքով և մինչև վերջ ջանասիրաբար կատարել այն:

Հովսեփը որոշել է փոփոխություններ մտցնել աշխատանքի հանդեպ իր վերաբերմունքի մեջ: Որտեղի՞ց նա պետք է սկսի: Կարող է սկսել պարզ մի որոշումով. «Երբ ինձ հանձնարարություն տան, ես չեմ բողոքի, այլ անմիջապես գործի կանցնեմ»: Աշխատելիս նա կարող է փորձել այն կատարել առավելավագույն չափով: Կարող է անգիր անել աստվածաշնչյան մի քանի համարներ, որոնք նրան կօգնեն աստվածաշնչյան վերաբերմունք զարգացնել աշխատանքի հանդեպ: Այդպիսի համարներից է Բ Կորնթացիներին 8:11-ը:

### Բ Կորնթացիներին 8:11.

**«Արդ, ավարտի՛ն հասցրեք սա, որպեսզի ինչպես հոժարությամբ սկսել եք, այնպես էլ ձեր ունեցածի չափով կատարեք»:**

Այս համարի առաջին նախադասությունն ասում է. «Արդ, ավարտի՛ն հասցրեք սա (այս գործը)»: Ժամեր շարունակ խորհելը, ուսումնասիրելն ու աղոթելը, հնարավոր է, բավարար չլինեն աշխատանքի հանդեպ աստվածաշնչյան վերաբերմունք զարգացնելու համար: Ուսումնասիրելը կարևոր է, սակայն հենց աշխատանքը կատարելն է հանդիսանում լավագույն հնարավորությունը՝ վերաբերմունքը փոխելու համար:

Եթե դու տվյալ պահին ուսանող ես, քեզ հավանաբար տնային աշխատանքներ են տալիս: Համարենք, որ ուզում ես փոխել քո վերաբերմունքը տնային աշխատանքի հանդեպ: Միզուցե դու չես սիրում տնայիններ անել, բայց կարող է դա փոխելու լավագույն հնարավորությունը հենց տնայինները կատարելը լինի: Ժամեր մի՛ վատնիր՝ փորձելով փոխել քո վերաբերմունքը նախքան տնային աշխատանք սկսելը:

Տնայիններդ անելիս դու, հնարավոր է, տեսնես, որ քո վերաբերմունքը փոխվում է՝ հատկապես, երբ ամբողջությամբ ավարտես բոլոր հանձնարարությունները: Քո տնային աշխատանքն (և դրանք հանձնարարող ուսուցիչներին) ատելու փոխարեն սկսում ես ուրախանալ: Դու կարո՞ղ ես փոխել տնային աշխատանքի հանդեպ քո վերաբերմունքը, եթե իրո՞ք ք ցանկանաս:

## 2. Փոխում եմ իմ մտքերը:

Կան վերաբերմունքներ, որոնք ավելի հեշտ է փոխելը, եթե նախ սկսում ես մտքերդ փոխելուց: Օրինակ, Վարուժանը, նախքան ճշմարիտ քրիստոնյա դառնալը, երկար տարիներ բարոյականության ոչ-աստվածաշնչյան չափանիշներ է ունեցել: Նա մի քանի տարբեր կանանց հետ է ապրել, սակայն երբևէ չի

ամուսնացել: Հիմա Վարուժանը ցանկանում է աստվածաշնչյան վերաբերմունք զարգացնել ինտիմ կյանքի հարցում: Որտեղի՞ց պետք է սկսի: Նրան կարող է թվալ, որ վերաբերմունքը փոխելն ավելի դժվար է, քան՝ վարքը: Նաև նրան կարող է ավելի հեշտ թվալ պարզապես դադարեցնելն իր ոչ-աստվածաշնչյան շփումը կանանց հետ: Սակայն դա ինքնաբերաբար չի փոխի նրա վերաբերմունքը:

Ահա՛ մի օրինակ, երբ վերաբերմունքը կարող է փոխվել՝ սկսելով մտքերի փոփոխությունից: Վարուժանը պետք է ուշադիր ուսումնասիրի, թե ինչ է ասում Աստված ինտիմ կյանքի հանդեպ քրիստոնյայի վերաբերմունքի մասին: Երբ նա ընդունի Աստծո չափանիշները և դրանք դարձնի իր մտածելակերպի մի մասը, նրա վերաբերմունքը կսկսի փոխվել: Վարուժանը նաև պետք է սովորի, թե ինչպես դեմ կանգնի սասանայի գայթակղություններին, որոնք տանում են կրքերի և սեռական այլ մեղքեր գործելուն: Աստվածաշնչյան համարներ անգիր անելը Վարուժանի համար կարևոր քայլ է իր մտքերը փոխելու հարցում:

Վարուժանի հավատալիքների փոփոխության հետ զուգընթաց կփոխվի նաև նրա վերաբերմունքը: Երբ նա սկսի կյանքի կոչել իր նոր հավատալիքները, նրա մտածելակերպը կվերափոխվի:

Այսպիսով, ո՞րն է ավելի լավ. սկսել մտքերի՞, թե՞ գործողությունների փոփոխությունից: Ինչպե՞ս կարող ես իմանալ, թե որն է քեզ համար լավագույնը: Այս հարցում փորձառությունը կարող է լինել քո լավագույն ուսուցիչը: Փորձի՛ր երկու ձևերն էլ: Այնքան էլ կարևոր չէ, թե որ ճանապարհով ես գնում, կարևորն այն է, որ քո վերաբերմունքներն ավելի ու ավելի քրիստոսակերպ դառնան: Այս երկու մոտեցումների համատեղումը նույնպես կարող է արդյունավետ լինել:

### **3. Ինչպե՞ս են իմ զգացմունքները համընկնում իմ վերաբերմունքների փոփոխության հետ:**

Վերաբերմունքների փոփոխությունը մեծ մասամբ մեր մտածելակերպի փոփոխությունն է ինչ-որ բանի վերաբերյալ: Սակայն մեր զգացմունքները սերտորեն կապված են մեր վերաբերմունքների հետ: Եթե ուզում ես փոխել քո այս կամ այն վերաբերմունքը, դու պետք է տեսնես այն կարևոր դերը, որ քո զգացմունքներն ունեն այդ փոփոխության ընթացքի մեջ:

Սառան ուզում է փոխել իր վերաբերմունքն առավոտյան արթնանալու հարցում: Նախկինում առավոտյան արթնանալիս նա նյարդայնանում էր: «Ես ատում եմ առավոտները», - սա էր անցնում նրա մտքով: Նա սովորաբար մի քանի անգամ սեղմում էր զարթուցիչի կոճակը, մինչև վերջնականապես վեր էր կենում անկողնուց, իսկ հետո սլանում էր, որ հասցնի պատրաստվել օրվա համար:

Եթե Սառան ուզում է առավոտյան արթնանալու հարցում փոխել իր վերաբերմունքը, ապա տարբերակներից մեկը կարող է լինել վարքը փոխելը: Սառան որոշում է իր վերաբերմունքի փոփոխությունը սկսել զիջերը քնելուց առաջ ինքն իր հետ խոսելուց: Որոշում է սկսել զարթուցիչի առաջին իսկ ձայնից՝ անկախ նրանից, թե ինչ կզգա, և այլևս չսեղմելով կոճակը՝ վեր կենալ անկողնուց:

Նա աստվածաշնչյան համարներ դուրս գրեց, որոնք կօգնեին իրեն նոր վերաբերմունք ունենալու հարցում, այդ թվում նաև՝ Սաղմոս 118:24-ը:

### **Սաղմոս 118:24.**

**«Սա այն օրն է, որ Տերն ստեղծեց. պիտի ցնծանք և ուրախ լինենք նրա մեջ»:**

Հաջորդ առավոտյան, երբ Սառայի զարթուցիչը հնչեց, նա սովորականի պես սեղմեց կոճակը: Նույն հին՝ «Ես ատում եմ առավոտները», տրտունջը դուրս եկավ նրա բերանից: Այդ պահին նա հիշեց գիշերվա իր որոշումը: Եվ այս անգամ նույնիսկ ավելի բարձրաձայն ասաց. «Ես ատում եմ առավոտները»: Այնուամենայնիվ դուրս եկավ անկողնուց և ուղղվեց դեպի լվացարան՝ լվացվելու:

Դրանից հետո Սառան սովորականից ավելի վատ էր զգում իրեն, քանի որ չէր վայելել այն մի քանի լրացուցիչ ընթացքներ, որ ունենում էր զարթուցիչը մի քանի անգամ անջատելու ընթացքում: Նա փորձեց վերհիշել իր գրած համարը, սակայն, թվում էր, նրա ուղեղը հրաժարվում է աշխատել: Անկողինն այնքան գայթակղիչ էր. ընդամենը մի քանի լրացուցիչ ընթացքի հանգի՛ստ: Բայց փոխարենը Սառան հասցրեց հարդարել անկողինը և հանգիստ հագնվել: Նա շատ ժամանակ ուներ նախաճաշելու և աշխատանքային օրվա համար պատրաստվելու: Այսօր նա կարող էր ավելի վաղ դուրս գալ տնից և ստիպված չէր շտապել:

Մի օրից ավել կպահանջվի, նախքան, ժամանակին արթնանալով, Սառան կկարողանա նոր վերաբերմունք զարգացնել առավոտվա հանդեպ: Նրա սրտնեղությունը նույնպես չի կարող մեկ կամ երկու օրում անհետանալ: Սակայն եթե նա ամեն օր կենտրոնանա իր վերաբերմունքը փոխելու վրա և նաև կրկնի աստվածաշնչյան համարները, ինչպիսի օրինակ՝ Սաղմոս 118:24-ը, կտեսնի, որ իր վերաբերմունքը սկսել է փոխվել:

Մեկ այլ ռազմավարություն, որ կարող է Սառային օգնել առավոտվա հանդեպ նոր վերաբերմունք զարգացնելու հարցում, աղոթելն ու Աստվածաշունչ կարդալն է: Սա կարող է նրան օգնել նոր օրը սկսել դրական լիցքերով՝ կենտրոնանալով Հիսուսի հետ իր փոխհարաբերության վրա:

Սառան իրոք լուրջ կարգապահության կարիք կունենա, որպեսզի ինքն իրեն ստիպի առավոտվա մասին նոր ձևով մտածել, քանի որ հին սովորությունները դանդաղ են մեռնում:

Հնարավոր է՝ նրա զգացմունքները փոխվեն ամենավերջում: Կարող է մի քանի օրեր պահանջվեն, անգամ շաբաթներ, նախքան նա ի վիճակի կլինի առավոտյան արթնանալ լրիվ նոր զգացմունքային ապրումով առավոտվա հանդեպ. ուրախանալ Աստծո տված նոր օրով:

Մեծագույն խնդիրը, որին Սառան և մենք բոլորս հանդիպում ենք, այն է, որ թույլ չտանք մեր զգացմունքներին՝ ղեկավարել մեր գործողությունները: Եթե մենք որոշենք փոխել մեր վերաբերմունքը, հնարավոր է՝ մեր զգացմունքները փոխվեն ամենավերջում:



#### 4. Պատկերացնելը:

Պատկերացնելը կարող է ամենաօգտակար միջոցներից մեկը լինել աստվածաշնչյան վերաբերմունքներ զարգացնելու հարցում: Մտքով երևակայության անցուղիներում թափառելու փոխարեն ժամանակ հատկացրու՝ Հիսուսի հետ քո փոխհարաբերությունը տեսողական դարձնելու համար: Պատկերացրու, թե ինչ կլիներ, եթե Հիսուսը քո կողքին լիներ, և դու կարողանայիր խոսել Նրա հետ: Առակների գիրքն ասում է. «Մարդն ինչպես մտածում է, այնպիսին է»: Աստվածաշնչյան սկզբունքը հստակ է՝ դու դառնում ես այն, ինչ մտածում ես: Սա կարելի է արտահայտել մեկ բառով՝ խորհել:

Վարուժանն ուզում է ճիշտ վերաբերմունք զարգացնել ինտիմ կյանքի վերաբերյալ: Եթե նա պատկերացնի, թե ինչպես կարող է աստվածաշնչյան մտածելակերպը կյանքի կոչել, դա նրան կօգնի՝ իրականացնելու այն նոր վերաբերմունքը, որ նա զարգացնում է այս ասպարեզում: Բայց եթե Վարուժանը շարունակ երազի «հին, բարի օրերի» մասին և երևակայի իր ինտիմ կյանքի անցած դեպքերը, ապա դա կզարգացնի նրա հին, ոչ-աստվածաշնչյան վերաբերմունքն ինտիմ կյանքի հարցում: Այդ երևակայական պատկերները կխանգարեն Վարուժանին՝ աստվածաշնչյան վերաբերմունք իրականացնել ինտիմ կյանքի հանդեպ:

Մենք նաև կարիք ունենք իմանալու, թե ինչպես է սատանան մեզ փորձելու մեր կյանքի այս ասպարեզում: Քեզ համար կարող է հեշտ թվալ՝ մտքով որոշ դեպքեր «կլինոնկարի» պես վայելելը, որն իրականում այն չէ, ինչի մասին Հիսուսը կուզեր, որ դու մտածեիր: Եթե քո մտածածը կյանքի կոչվի, ապա դու մեղք կգործես:

Քո մտքի «կլինոնկարների» հանդեպ նոր վերաբերմունք զարգացնելու մարտահրավերը կարող է քեզ համար շատ դժվար լինել: Հնարավոր է՝ դու չկարողանաս դիմակայել այդ «կլինոնկարներին»՝ մուտք գործել քո միտք, սակայն կարող ես որոշել «անջատել» դրանք, հենց որ գիտակցես դրանց ներկայությունն այնտեղ: Դու պետք է «ճշմարտության թեսթի» ենթարկես այդ «կլինոնկարները». արդյո՞ք դա այն է, ինչի մասին Հիսուսը կուզենար, որ մտածեիր: Եթե ոչ, ապա փոխարինի՛ր դրանք այնպիսի մտքերով, որոնց շուրջ Հիսուսը կուզենար, որ դու մտորեիր:

Սատանան ոչ միայն «կլինոնկարներ», այլև դրանց հետ նաև կարող է զգացմունքների հեղեղ բերել քո միտք: Դրանք քեզ շատ գրավիչ կթվան: Դրանց հանդեպ քո հրապուրանքը կարող է խլացնել այն, ինչ Աստված է ասում այդ հարցի շուրջ:

Կամ էլ սատանան կարող է այդ «կլինոնկարների» հետ մեղադրանքի հեղեղ բերել: Դու քեզ շատ վատ կզգաս՝ գիտակցելով, թե ինչքան մեղսալից են այն պատկերները, որոնց «նայում ես» քո մտքում: Այդ մեղադրանքը սատանայի ձեռքին իրական զենք է, որպեսզի քեզ հուսահատեցնի և տանի այնպիսի հուսալքության, որ իբրև թե դու երբևէ չես կարող փոխվել:

Մեզ համար մարտահրավերն այն է, որ մեր միտքը լցնենք Աստծո ճշմարտությամբ: Աստվածաշնչյան համարներ անգիր անելը և դրանց շուրջ խորհելը լավագույն ձևն է քո մտքի պատերազմը հաղթելու համար: Որոշո՞ւմ կայացրու. ճշմարտության ստուգման ենթարկել ցանկացած «կինոնկար», որ սկսում է պտտվել քո մտքում: Ստեղծի՛ր քո սեփական «մտքի կինոնկարները»՝ ինքդ քեզ պատկերացնելով Հիսուսի հետ ձեռք ձեռքի քայլելիս՝ քո ամենօրյա դժվարությունները հաղթահարելու համար:

## **5. Օգտագործի՛ր Աստվածաշնչի՝ քո անձնական ուսումնասիրությունը, որը կօգնի քեզ նոր վերաբերմունքներ զարգացնելու համար:**

Քո վերաբերմունքները փոխելու համար լավագույն միջոցը միտքդ Աստծո Խոսքով լցնելն է: Այն ամենը, ինչ մտնում է քո միտք, այն է, ինչի մասին մտածում ես: Անգի՛ր արա համարներ, որոնք առնչվում են այն նոր մտածելակերպին, որ ուզում ես զարգացնել: Ամեն օր վերանայի՛ր այդ համարները: Խորհի՛ր այդ ճշմարտությունների մասին գիշեր ու ցերեկ: Երբ միտքդ ներծծվի Աստծո ճշմարտություններով, դու կտեսնես, որ աստվածաշնչյան վերաբերմունքներ զարգացնելն ավելի հեշտ է դառնում:

Ահա՛ Աստվածաշնչի ուսումնասիրության մի օրինակ, որը կարող է քեզ օգտակար լինել նոր վերաբերմունք զարգացնելու հարցում:

1. Գրի՛ր այն իրավիճակ(ներ)ը, երբ դու վատ վերաբերմունքներ ես դրսևորել:
2. Աստծուն հարցրո՛ւ. «Ի՞նչ նոր վերաբերմունք ես Դու ուզում, որ ես այսօր կիրառեմ»:
3. Գրի՛ր աստվածաշնչյան այն վերաբերմունքները, որոնք դու կարիք ունես զարգացնելու:
4. Համակցի՛ր դրանք Աստվածաշնչի քո ուսումնասիրության հետ: Ուսումնասիրի՛ր այն համարները, որոնք կապ ունեն այդ վերաբերմունքների հետ:
5. Այսօրվա համար նպատակնե՛ր դիր: Գրի՛ր այն գործողությունները, որոնք կարող ես այսօր իրականացնել, և որոնք քեզ կօգնեն զարգացնել այդ աստվածաշնչյան վերաբերմունքները: Ընտրի՛ր մեկ նպատակ և իրականացրո՛ւ այն:
6. Գնահատի՛ր արդյունքներն օրվա նպատակն իրականացնելուց հետո:

Վերաբերմունքները փոխելու համար հեշտ քայլեր չկան: Սակայն Աստված խոստացել է օգնել մեզ: Փիլիպպեցիներին 1:6-ն ասում է. «Այս բանում վստահ լինելով, որ Նա՝ Ով ձեր մեջ սկսեց բարի գործը, այն կհասցնի իր ավարտին մինչև Հիսուս Քրիստոսի օրը»:

## Գլուխ 3

# Ճիշտ վերաբերմունքներ ունենալ, երբ քեզ հանդիմանում են կամ քննադատում

### Ա. Ինչո՞ւ են մարդիկ ինձ նեղացնում:

Մարիամը երեք տարի առաջ էր եկել Թին Չելլենջ՝ ապրելու: Սակայն հիմա զայրացած է: Նա բարկանում է տնօրենի վրա և ասում. «Ինչո՞ւ է ողջ անձնակազմն ինձ նեղացնում: Ամեն անգամ, երբ ինձ տեսնում են, մեկն ասում է ինձ՝ սա՛՛ արա, իսկ մյուսն ասում է՝ սա մի՛՛ արա: Ինչո՞ւ ինձ հանգիստ չեն թողնում: Սա ի՞նչ է, բա՞նտ է»:

Գևորգը վերջերս է ճշմարիտ քրիստոնյա դարձել և մասնակցում է տեղական եկեղեցուն: Նրա ընտանիքում ուրիշ ոչ ոք ճշմարիտ քրիստոնյա չէ, այնպես որ նրա համար քրիստոնյաների հետ շփվելը, հատկապես եկեղեցում, մի նոր փորձառություն է: Վերջին երկու կիրակիներին սարկավագներից մեկը եկեղեցու ժողովից հետո մի կողմ էր տարել Գևորգին և խոսել նրա հետ որոշ բաների մասին, որոնք վերջինս արել էր շաբաթվա ընթացքում: Գևորգը սիրում է այդ եկեղեցու մարդկանց, սակայն սկսում է անհանգստանալ, թե ինչու են նրանք մտնում իր անձնական կյանքի մեջ:

Լինո՞ւմ է, որ դու Մարիամի կամ Գևորգի նման մտածես: Վերջին մի քանի շաբաթվա ընթացքում, եղե՞լ էս այնպիսի իրավիճակներում, երբ մարդիկ փորձել են հանդիմանել քեզ: Դժվար է նման ճնշմանը դիմանալ: Սակայն փորձի՛ր դիմանալ դրան. նորադարձ քրիստոնյաները հաճախ են քննադատության ենթարկվում: Նրանք նաև տեսնում են, որ իրենց առաջնորդները փորձում են մատնացույց անել և ուղղել նրանց թերություններն ու պակասությունները: Դա ցավալի է՝ անկախ այն բանից, թե ինչքան հասուն ես դու: Մեզ միշտ էլ դուր չի գալիս, երբ մեր տկարությունները բացահայտվում են:

Այս գլխում մենք ցանկանում ենք ուսումնասիրել հանդիմանության և քննադատության խնդիրը: Ավելի հանգամանորեն կքննենք, թե ինչպիսին պետք է լինի քրիստոնյայի վերաբերմունքը, երբ նրան հանդիմանում են կամ քննադատում:

## Բ. Աստվածաշնչյան ինչպիսի՞ վերաբերմունք պետք է ունենալ, երբ քեզ հանդիմանում են կամ քննադատում:

Աստվածաշունչը շատ բան ունի ասելու այն մասին, թե ինչպես պետք է մենք արձագանքենք, երբ մեզ քննադատում են կամ հանդիմանում: Հաճախ նորադարձ քրիստոնյաները գալիս են մի իրականությունից, երբ սովոր են հանդիմանությանն ու քննադատությանն արձագանքել շատ արագ ու ոչ-աստվածաշնչյան ձևով:

Քննադատության հանդեպ քո վերաբերմունքն ուղղակի ազդում է այն բանի վրա, թե ինչ ես դու ասում և անում ինչ-որ մեկի քննադատության ժամանակ: Իսկ ի՞նչ է ասում Աստված այս վերաբերմունքի մասին: Ահա՛ մտածելակերպի մի օրինակ, որը դու կարող ես օգտագործել, երբ քեզ հանդիմանում են կամ քննադատում:

### Աստվածաշնչյան վերաբերմունք ունենալ, երբ քեզ հանդիմանում են:

1. Երբ ինձ հանդիմանում են (կամ քննադատում): Առակաց 10:17
2. Ես ուշադիր կլսեմ: Հակոբոս 1:19-20
3. Ես շնորհակալ եմ, որ նա հանդիմանում է ինձ: Ա Թեսաղոնիկեցիներին 5:18
4. Ես սխալ էի: Առակաց 28:13
5. Ինչպե՞ս կարող եմ կանխել, որ սխալ քայլը նորից տեղի չունենա: Առակաց 15:31-32

34-35 էջերում կա մի աղյուսակ, որը մանրամասնորեն ցույց է տալիս աստվածաշնչյան այն վերաբերմունքը, որը մարդը կարող է կիրառել, երբ քննադատվում է:

Ավելի մանրամասն դիտարկենք այս մտքերից յուրաքանչյուրը, որոնք դու կարող ես կիրառել, երբ քեզ քննադատում են կամ հանդիմանում:

### Միտք 1. Երբ ինձ հանդիմանում են (կամ քննադատում):

Հանդիմանությանը կամ քննադատությանն աստվածաշնչյան վերաբերմունքով արձագանքելու առաջին քայլը գիտակցելն է, որ քեզ հանդիմանում են: Սա շատ պարզ է թվում, սակայն կա՛նգ առ մի պահ և մտածի՛ր, թե ինչպես պետք է արձագանքես, երբ ինչ-որ մեկը քննադատում է քեզ: Մեզնից որոշներն անմիջապես արձագանքում են այս ձևով. «Դու քեզ ո՞ւմ տեղն ես դրել: Ինչո՞ւ քո գործերով չես զբաղվում»: Նա, ով այսպես է արձագանքում, ընդամենն

արձագանքում է դիմացինի ասածին, սակայն այն չի տեսնում որպես հանդիմանություն:

Եթե ուզում ես քննադատությանը պատասխանել աստվածաշնչյան վերաբերմունքով, դու պետք է անմիջապես չարձագանքես և ինքդ քեզ գիտակցաբար ասես. «Սա հանդիմանություն է: Ուրեմն ինչպե՞ս կարող եմ պատասխանել այս հանդիմանությանն աստվածաշնչյան վերաբերմունքով»: Մենք պետք է ավելի զգայուն լինենք մեր շուրջը տեղի ունեցող երևույթների հանդեպ: Պետք է զգոն լինենք, պատրաստ՝ ընկալելու և տարբերելու հանդիմանությունը կամ քննադատությունը, որն ուղղված է մեզ:

Այսպիսով, երբ մեզ հանդիմանում են կամ քննադատում, առաջին բանը, որ պետք է մտածենք, այս է. «Սա հանդիմանություն է»: Ի՞նչ պետք է մենք ասենք և անենք այս պարագայում:

Ոչ մի բան մի՛ ասա: Նայի՛ր տվյալ անձնավորությանը: Ցո՛ւյց տուր նրան, որ դու պատրաստ ես լսելու: Լո՛ւ ա մնա:

Առակների գիրքը մի քանի համարներ ունի, որոնք կարող են մեզ օգնել՝ արձագանքել այս առաջին մտքին համապատասխան ձևով:

**Առակաց 10:17.**

**«Խրատը պահողը կյանքի ճանապարհին է, իսկ հանդիմանություն մերժողը մոլորվում է»:**

**Առակաց 23:12**

**«Միրող տուր խրատի ու ականջների գիտության խոսքերին»:**

**Առակաց 3:11-12.**

**«Որոյա՛կ իմ, մի՛ անարգիր Տիրոջ խրատը ու մի՛ ձանձրանա Նրա հանդիմանությունից, քանի որ Տերը խրատում է նրան, ում սիրում է, ինչպես հայրը՝ իր սիրասուն զավակին»:**

Առակաց 3:11-12-ը հստակ ցույց է տալիս, որ Աստված հանդիմանում է մեզ: Այս ճշմարտության ցավոտ կողմն այն է, որ Նա շատ անգամ մարդկանց է օգտագործում դա անելու համար: Դժբախտաբար, տպավորությունն այնպիսին է, որ Աստված հաճախ օգտագործում է այնպիսի մարդկանց, որոնք շատ վատ են անում հանդիմանության գործը: Բոլորիս կյանքում էլ եղել են ժամանակներ, երբ մարդիկ մեզ սխալ ձևով են հանդիմանել: Այդպիսի դեպքերում շատ դժվար է հասկանալ, որ Աստված մեզ ուզում է ուղղել այդ անձնավորության միջոցով: Այնպես որ, երբ քննադատում են, առաջինը պետք է մտածել. «Սա հանդիմանություն է (Աստված ինձ հանդիմանում է այս անձնավորության միջոցով)»:

## Միտք 2. Ես ուշադիր կլսեմ:

«Ես նրան ուշադիր կլսեմ ավելի քան երեք վայրկյան կամ ինչքան որ պահանջվի, որպեսզի հասկանամ, թե նա ինչ է ուզում ինձ ասել»: Սա հասարակ միտք է, սակայն մեզնից շատերի համար՝ դժվար կատարելի: Քննադատության արձագանքելու հին մտածելակերպը միանգամայն տարբեր էր. «Հենց որ ես հասկանամ, որ ինձ քննադատում են, ես էլ նրանց կքննադատեմ»: Այդ անձնավորությանը լսելու փոխարեն մեր մեջ, հնարավոր է, ցանկություն առաջանա ընդհատել նրան ու ներկայացնել տվյալ պատմությունը մեր տեսանկյունից:

Հակոբոս 1:19-20-ը որոշ լավ խորհուրդներ է տալիս, որոնք կարող են մեզ օգնել, որպեսզի հաջողությամբ կիրառենք այդ միտքը, երբ մեզ հանդիմանում են:

### Հակոբոս 1:19-20.


**«Ուստի, իմ սիրելի՛ եղբայրներ, ամեն մեկը թող լսելու մեջ արագաշարժ, իսկ խոսելու կամ բարկանալու մեջ ծանրաշարժ լինի, քանի որ մարդու բարկությունն Աստծո արդարությունը չի կատարում»:**

Կան երեք բաներ, որոնք կապ ունեն այս մտքի հետ, երբ մեզ հանդիմանում են: Առաջին. համարն ասում է. «Ամեն մեկը թող լսելու մեջ արագաշարժ լինի»: Մի միտք ավելացնենք՝ արագ լինել ուշադիր լսելու մեջ: Երկրորդ. Հակոբոսն ասում է, որ մենք պետք է «ծանրաշարժ լինենք խոսելու մեջ»: Մեզնից շատերի համար հակառակն է ճիշտ, երբ մեզ քննադատում են: Մենք ծանրաշարժ ենք լսելու և արագաշարժ ենք խոսելու մեջ:

Եթե մենք կարողանանք հետևել՝ «արագաշարժ լինենք լսելու» և «դանդաղաշարժ լինենք խոսելու» մեջ մտքին, ապա մեզ համար ավելի հեշտ կլինի անել երրորդ բանը, որ Հակոբոսն ասում է՝ «բարկանալու մեջ ծանրաշարժ» եղև ք: Բարկությունը սովորական բան է այնպիսի իրավիճակներում, երբ մարդիկ քննադատվում են, կամ նրանց հանդիմանում են: Հեշտ է բարկությամբ պատասխանել, երբ ինչ-որ մեկը քննադատում է մեզ:

Տարածված բան է՝ արագ արձագանքել ինչ-որ մեկի հանդիմանությանը՝ ասելով. «Սպասի՛ր մի րոպե. ես 100%-ով սխալ չեմ»: Այդպիսով մենք սկսում ենք կենտրոնանալ այն մասի վրա, որը ճիշտ ենք արել:

Քանի դեռ մենք արդարացնում ենք մեր վարքն ու կենտրոնանում այն մասի վրա, որտեղ ճիշտ ենք վարվել, չենք կարողանա օգուտ քաղել հանդիմանությունից, այն է՝ որտեղ ենք սխալվել:



Մի բուսակ մտածի՛ր վերջերս տեղի ունեցած մի իրավիճակի մասին, երբ ինչ-որ մեկը հանդիմանել է քեզ: Քո կարծիքով քանի՞ տոկոսով էիր դու ճիշտ. 10%, 50% կամ 85%: Քո կարծիքով քանի՞ տոկոսով էիր դու սխալ. 10%, 50% կամ 85%:

Եթե մենք անգամ 1% ճիշտ լինենք, այնքան հեշտ է պարզապես կենտրոնանալ այդ 1%-ի վրա, քան թե ընդունել, թե ինչն ենք սխալ արել:

Հազվադեպ է լինում, որ ինչ-որ իրավիճակում մենք 100%-ով ճիշտ կամ 100%-ով սխալ լինենք: Մեր գործողություններն արդարացնելու փոխարեն մենք պետք է սովորենք ուշադիր լսել ոչ թե այն, թե ինչ է այդ մարդն ասում մեզ, այլ այն, թե ինչ է Աստված ասում մեզ տվյալ անձնավորության միջոցով:

Եթե դու քննադատվելիս ուզում ես կիրառել աստվածաշնչյան այս վերաբերմունքը, հնարավոր է՝ ստիպված լինես քո բնավորության մեջ զարգացնել ինքնատիրապետման գիծը:

### **Առակաց 13:3.**

**«Իր բերանը զսպողն իր անձն է պահում, բայց շրթունքը լայն բացողը կործանվելու է»:**

### **Հակոբոս 1:26.**

**«Եթե ձեր մեջ մեկն իրեն կրոնասեր է համարում և իր լեզվին սանձ չի դնում, նա իր սրտին է խաբում, նրա կրոնասիրությունը փուչ է»:**

Եթե անգամ դու կարծում ես, որ այն մարդը, ով քեզ հանդիմանում և քննադատում է, սխալ է, ուշադիր լսիր: Մա կարող է համբերության մեծ չափ պահանջել:

*«Ի՞նչ պետք է ես ասեմ, երբ ինձ քննադատում են կամ հանդիմանում»:*

Ոչ մի բան մի՛ ասա:

«Ի՞նչ պետք է ես անեմ»:

Շարունակի՛ր նայել այն մարդուն, ով հանդիմանում է քեզ: Եվ ուշադի՛ր լսիր: Քո դեմքի արտահայտությամբ ցո՛ւյց տուր, որ ուզում ես լսել, թե ինչ ունի այդ մարդը քեզ ասելու: (Հիշի՛ր, որ դեռ բարկանալու ժամանակը չէ):

### **Միտք 3. Ես շնորհակալ եմ, որ նա հանդիմանում է ինձ:**

Արդյո՞ք սա իրատեսական միտք է, երբ քեզ հանդիմանում են: Ինչո՞ւ պետք է դու շնորհակալ լինես, հատկապես եթե գիտես, որ տվյալ անձնավորությունը սխալ է: Ի՞նչ է Աստված քեզնից սպասում, որ անես:

Ա Թեսաղոնիկեցիներին 5:18-ն ասում է. «Ամեն ինչում գոհությո՛ւն մատուցեք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար Քրիստոս Հիսուսով»:

Քեզ համար կարող է քո կյանքում այս միտքը կիրառելը դժվար թվալ: Բայց սա մեր նպատակն է: Եթե կարողանաս խոսել այս մտքի շուրջ, երբ քեզ քննադատում են, դու ավելի հեշտությամբ կկարողանաս Աստծո ուզած ձևով արձագանքել: Շատ դժվար է շնորհակալ լինել և, միևնույն ժամանակ, բարկանալ:

Միգուցե դու պետք է սկսես ինքդ քեզ ասել. «Ես այս պահին պետք է շնորհակալ լինեմ, թեև ինձ հանդիմանում են: Ես գիտեմ, որ ուրախ չեմ, սակայն ուզում եմ շնորհակալ լինել»:

Հնարավոր է՝ դու հարցնես. «Ինչո՞ւ պետք է ես ուրախ լինեմ, երբ ինձ հանդիմանում են: Ինչո՞ւ պետք է ես ուրախ լինեմ, երբ անցնում եմ այս ցավոտ խնդրի միջով»: Հստակ պատկերացում ունենալը, թե ինչու պետք է ուրախ լինես, կարող է քեզ օգնել՝ անցնելու այդ խնդրի միջով առանց տվյալ անձնավորության վրա բարկանալու:

Ուրախ լինելու պատճառներից մեկն այն է, որ Աստված Ա Թեսաղոնիկեցիներին 5:18-ում քեզ ասում է, որ միշտ շնորհակալ լինես: Ուրախ լինելու մեկ այլ պատճառ է այն, որ դու գիտակցում ես, որ սկսել ես քննադատությանն ու հանդիմանությանը պատասխանել աստվածաշնչյան վերաբերմունքով: Դու ավելի ես նմանվում Քրիստոսին: Հակոբոս 1:2-4-ը մի քանի լրացուցիչ պատճառներ է տալիս ուրախ լինելու, երբ քեզ հանդիմանում են:

#### **Հակոբոս 1:2-4.**

**«Եղբայրնե՛րս, երբ այլևայլ փորձությունների մեջ ընկնեք, այդ բոլորը ուրախություն համարեցե՛ք իմանալով, որ ձեր հավատի փորձառությունը համբերություն է առաջ բերում: Մակայն համբերությունը թող կատարյալ արդյունք ունենա, որպեսզի կատարյալ և ամբողջական լինեք և ոչ մի բանի պակասություն չունենաք»:**

Հատուկ ուշադրությո՛ւն դարձրեք հատկապես 4-րդ համարի վերջին մասի վրա: Եթե դու օգուտ քաղես հանդիմանությունից, դու կաճես որպես «ոչ մի բանի



պակասություն չունեցող» անձնավորություն: Մա ուրախ լինելու լավ պատճառ է: Այն անձնավորությունը, ով հանդիմանում է ինձ, օգնում է, որ ես դառնամ հասուն անձնավորություն առանց որևէ պակասության:

Մենք վերևում նշեցինք, որն Աստված մեզ հանդիմանում է մարդկանց միջոցով: Մեկ այլ պատճառ, որ դու կարող ես ուրախ լինել, այն է, որ Աստված այդ մարդու միջոցով ժամանակ է հատկացնում, որպեսզի օգնի քեզ: Աստված սա անում է, որովհետև սիրում է քեզ և ուզում է, որ դու աճես ու ավելի լավ անձնավորություն դառնաս:

Դու, հնարավոր է, գայթակղություն ունենաս՝ մտածելու քեզ հանդիմանող անձնավորության դրդապատճառների շուրջ: Քո հին վերաբերմունքն այս իրավիճակներում կարող էր այսպիսին լինել. «Այս մարդը պարզապես փորձում է ինձ վատ վիճակի մեջ դնել»:

Այն անձնավորությունը, ով աստվածաշնչյան վերաբերմունք է կիրառում հանդիմանություն ստանալիս, հարցականի տակ չի դնի իրեն հանդիմանողի դրդապատճառները: Որպես քրիստոնյա՝ մենք պատվեր ունենք սիրել մարդկանց, որն Աստվածաշնչի մեծագույն պատվիրաններից երկրորդն է: Առաջին Կորնթացիներին 13-րդ գլուխը մի ամբողջ ցանկ է տալիս, թե ինչպես կարող ենք սիրել մարդկանց: Միտք հատկություններից մեկն ուղղակի խոսում է քո վերաբերմունքի մասին այն մարդու հանդեպ, ով հանդիմանում կամ քննադատում է քեզ: Եթե սիրում ես ինչ-որ մեկին, ապա դու կլինես մի անձնավորություն, ով «միշտ վստահում է Աստծուն» և «ամեն բանի հույս ունի» (Ա Կորնթացիներին 13:7): Հավատա՛ այդ մարդու լավ դիտավորությանը: Համարենք, որ այդ անձնավորությունը քեզ հանդիմանում է, քանի որ սիրում է քեզ ու հոգ է տանում քեզ համար, հանդիմանում է, երբ տեսնում է, որ դու սխալ բան ես անում:

Երբ խորհում եմ այս մտքի շուրջ՝ «Ես շնորհակալ եմ, որ նա հանդիմանում է ինձ», ի՞նչ պետք է ասեմ և անեմ:

Առաջինը՝ քո դեմքի արտահայտությամբ և քո ձայնի տոնայնությամբ բարեկամություն և գնահատա՛նք ցույց տուր: Դիմացիներն մի՛ դիր անհարմար իրավիճակի մեջ և թո՛ւյլ տուր՝ նա իմանա, որ բարկացած չես այն բանից, որ փորձում է քեզ ուղղել:

Ամենահարմար ժամանակն է՝ ասելու քո առաջին բառերը, երբ տվյալ անձնավորությունը քեզ հանդիմանում է կամ քննադատում: Գուցե դու ցանկանաս ասել. «Շնորհակալ եմ, որ իմ ուշադրությունը հրավիրեցիր այս հարցի վրա», կամ՝ «Ես գնահատում եմ ինձ ուղղելու քո պատրաստակամությունը»: Մրանից անմիջապես հետո արա՛ մի արտահայտություն, որը համընկնում է աստվածաշնչյան այս վերաբերմունքի հաջորդ մտքի հետ:

## Միտք 4. Ես սխալ էի:

«Ես սխալ էի», կարծես՝ հայերենի երեք ամենադժվար բառերն են: Այն անձնավորության համար, ով ցանկանում է աստվածաշնչյան վերաբերմունք զարգացնել հանդիմանություն ստանալիս, այս միտքը շատ կարևոր է: Մեկ այլ միտք, որ համընկնում է վերջինիս հետ, սա է. «Ի՞նչ եմ արել, որ նրան ստիպել է մտածել, որ ես սխալ եմ»:

Այն անձնավորությունը, ով հանդիմանում կամ քննադատում է քեզ, սովորաբար իր մտքում կոնկրետ մի բան ունի քեզ հետ խոսելիս: Շատ կարևոր է, որ մենք փորձենք իրավիճակին նայել նրա տեսանկյունից:

Ի՞նչ պետք է ես ասեմ խոսակցության այս կետում:

Հնարավոր է՝ դու ցանկանաս այսպիսի մի բան ասել. «Այն, ինչ ես լսեցի քեզնից, սա է՝ \_\_\_\_\_»: (Շատ համառոտ բացատրի՛ր, թե ինչ ես մտածում նրա այն ասածի մասին, որ դու սխալ ես եղել): «Դու ճիշտ ես, ես սխալ էի»:

«Բայց սպասի՛ր մի րոպե», - կարող ես ասել ինքդ քեզ, - «ես ամբողջությամբ սխալ չէի: Նա տեղյակ չի պատմության իմ տեսակետին: Նա միանգամից շտապում է եզրակացություն անել առանց պատմության իմ տեսակետն իմանալու: Դա ազնիվ չէ: Ես իմ իրավունքներն ունեմ: Ես արդարություն եմ պահանջում»:

Մեզ համար հեշտ է մերժել այս մեղադրանքները և հակադարձել. «Ո՛չ, դու ամեն բան սխալ ես հասկացել: Ահա՛ թե իրականում ինչ է տեղի ունեցել \_\_\_\_\_»: Եվ մենք նրանց պատմում ենք պատմության մեր կողմը: Իհա՛րկե, մինչև վերջացնելը մենք գիտենք, որ պարզապես արդարացնում ենք մեր արածը: Մենք իրականում ոչ մի վատ բան չենք արել: Դա հնարավոր չէ զսպել, և շատ հաճախ հենց այս կետում են սկսվում վիճարկությունները:

Շատ քրիստոնյաների համար, երբ նրանց հանդիմանում են կամ քննադատում, դժվար է ընդունել այս միտքը. «Ես սխալ եմ»: Հենց միայն այս մտքի շուրջ խորհելն արդեն մարտահրավեր է: Ասենք, որ դրան հաջորդող ճիշտ բառերն ասելն ավելի դժվար է:

«Քո ասելուց ես հասկացա, որ \_\_\_\_\_: Դու ճիշտ ես: Ես սխալ էի»: Այս բառերը կարելի է տարբեր կերպ ասել: Կարևորն այն է, թե դու ինչպես դրանք կասես:

1. Դու դրանք կարող ես ասել վախից ելնելով: Գիտես, որ այդ անձնավորությունը կարող է քեզ վնասել, կամ գործից հանել: Դրա համար, որպեսզի ինքդ քեզ պաշտպանես, դու ասում ես այն, ինչ նա ցանկանում է լսել:
2. Դու կարող ես դա ասել կեղծելով: Քո ասածը կարող է անկեղծ հնչել, սակայն իրականում դու ներքուստ դա նկատի չունենաս: Դու, իմանալով, որ դիմացինդ ուզում է քեզնից լսել՝ «Ես սխալ էի» արտահայտությունը, նրան այդպես ասելով ստիպում ես մտածել, որ համաձայն ես նրա հետ:

Կեղծավոր լինելն այս կետում հնարավոր է՝ ստացվի, սակայն դա չի ստացվի Միտք 5-ում, որն ասում է. «Ինչպե՞ս կարող եմ կանխել, որ սխալ քայլն այլևս չկրկնվի»:

3. Դու դա կարող ես ասել ձայնի ծաղրական տոնով: Սա, հավանաբար, դիմացինին կբարկացնի և ավելի կթեժացնի վեճը:
4. Դու կարող ես «Ես սխալ էի» արտահայտությունն ասել Աստծուն՝ թույլ տալով, որ դիմացինը լսի դա: Սա համընկնում է այն բանի հետ, ինչ մենք ասացինք Միտք 1.-ում:

Աստված օգտագործում է այս անձնավորությանը, որպեսզի ուղղի քեզ: Այնպես որ, իրականում վերոնշյալ կետում կարևորն այն է, որ Աստծուն ասես, որ դու սխալ էիր: Անկե՛ղծ եղիր Աստծո և այն մարդու հետ, ով հանդիմանում է քեզ: Եթե դու այս խոսքերն ասես տխուր տոնով և իրականում նկատի ունենաս այն, ինչ ասում ես, դիմացինը, ամենայն հավանականությամբ, կտեսնի, որ դու իրոք անկեղծ ես:

Մեկ այլ կարևոր հարց, որ կարող է քեզ օգնել այս վերաբերմունքի հարցում, սա է՝ հասկանալ, որ դու կարող ես «կույր հատվածներ» ունենալ քո կյանքում: Ուրիշները դրանք ավելի հեշտությամբ կտեսնեն, քան դու: Մի հայա՛ց գցիր հաջորդ էջում գտնվող նկարագրումանը, որը մարդու կյանքում եղած կույր հատվածների օրինակ է ցույց տալիս:

Դու պետք է պատրաստակամ լինես՝ ուշադիր լսել, թե ինչ են մարդիկ ասում, և ինքդ քեզ ասես. «Ես, հնարավոր է, կույր հատվածներ ունեմ իմ կյանքում, այդ պատճառով կարիք ունեմ լսելու, թե ինչ է այս անձնավորությունն ասում ինձ»:

Մի քանի բնավորության գծեր քեզ կօգնեն աստվածաշնչյան վերաբերմունք դրսևորել այս կետում. խոնարհություն, համարձակություն, անկեղծություն, ազնվամտություն և զանազանելու ունակություն: Առակների գրքի երկու համարներ ուղղակիորեն խոսում են այս մտքի շուրջ, որը կապ ունի քեզ հանդիմանելիս քո վերաբերմունքի հետ:

**Առակաց 5:21.**

**«Քանի որ մարդու ճամփաները Տիրոջ աչքերի առջև են, ու Նա կշռադատում է նրա բոլոր քայլերը»:**

**Առակաց 28:13.**

**«Նա, ով ծածկում է իր մեղքերը, հաջողություն չի ունենա, բայց ով խոստովանում ու հեռանում է դրանցից, ողորմություն է գտնելու»:**

Մեկ այլ բան, որ դու այս կետում պետք է անես, որոշելն է, թե արդյոք քո արարքը մե՞ղք էր, թե՞ ոչ: Եթե մեղք ես գործել, ապա պետք է խոստովանես Աստծուն և Նրանից ներում խնդրես: Եթե մեղք չես գործել, ապա կարիք չկա դա խոստովանել Աստծո առաջ որպես մեղք: Ասենք թե դու հատակը ճիշտ չես մաքրում, և ղեկավարը գալիս ու նկատողություն է անում քեզ: Դու ընդունում ես,

# Ուղղել կույր հատվածները:

Մի օր ես լսեցի, թե ինչպես էր մի երիտասարդ գույգ վիճում: Կինը մեղադրում էր ամուսնուն ուրիշ աղջիկներին սիրահետելու մեջ: Վերջինս եռանդազին հերքում էր: Ամուսնու հետ խոսելուց հետո ես հասկացա, թե ինչն էր խնդիրը: Նա «կույր հատվածներ» ուներ իր կյանքում, սակայն տեղյակ չէր դրանից:

1. Աստված «չափանիշ» կամ ստանդարտ ունի մեզնից յուրաքանչյուրի համար՝ մեր կյանքի բոլոր ասպարեզներում:

## Վարքի չափանիշ.

- բարոյականության մեջ,
- հնազանդության մեջ,
- երախտագիտության մեջ,
- խոնարհության մեջ
- և այլն:

2. Երբ ամուսինը, ում մասին վերևում նշեցինք, ավագ դպրոցում էր սովորում, լրջորեն խախտել էր Աստծո չափանիշն իր բարոյական կյանքում:

«Կույր հատված».  
Նա չէր կարողանում այն տեսնել, քանի որ նրա կենտրոնացումն ավելի շուտ այն բանի վրա էր, թե ով էր եղել ինքը, քան թե՛ ով պետք է լիներ:

«Ինչպե՞ս էր Աստծո չափանիշը»:

Տեսնել Աստծո չափանիշը:

Տեսնել ամուսնու չափանիշը:



3. Դպրոցից հետո նա ապաշխարել էր իր անբարո վարքից և նպատակադրվել էր աստվածապաշտ կյանք վարել: Նա հետադարձ հայացք էր ուղղել այն բանին, թե ժամանակին ով էր եղել ինքը, և բաջալերվել էր իր բարելավման պատճառով:

## Իրականության իջեցված չափանիշը:

- Մեզնից յուրաքանչյուրն իր կյանքում ունի կույր հատվածներ, և շատ կարևոր է, որ մենք ունենանք շատ մտերիմ ընկերներ, ովքեր անկաշկանդ կլինեն և մեզ կասեն դրանց մասին:
- «Բարեկամի հասցրած վերքերը հավատարմություն են, իսկ թշնամու համբույրները խաբեություն են», Առակաց 27:4:
  - «Ինչպես երկաթը երկաթ է սրում, այնպես էլ մարդը՝ իր բարեկամի երեսը», Առակաց 27:17:

Հեղինակային իրավունք, 1981, Կյանքի Հիմնական Սկզբունքների Ինստիտուտ: Օգտագործված է թույլտվությամբ:

որ սխալ էիր և սկսում ես մաքրել այնպես, ինչպես նա է ասում: Սակայն դու կարիք չունես այս պարագայում Աստծուց ներողություն խնդրել հատակը սխալ մաքրելու համար:

Շատ անգամ քո սխալը կարող է վիրավորել մարդկանց: Եթե ինչ-որ մեկից փող ես գողացել, ապա պետք է գնաս այդ մարդու մոտ, խոստովանես քո մեղքը և խնդրես նրան՝ ներել քեզ: Պատրա՛ստ եղիր փոխհատուցել այն բանի համար, որ գողացել ես կամ փչացրել:

Իրոք, համարձակություն է պահանջվում, որպեսզի ասես. «Ես սխալ էի»: Աստված ուզում է, որ դու համարձակ լինես: Հին Կտակարանում, Դավիթ թագավորին հանդիմանեցին Բերսաբեի հետ ունեցած իր մեղքի և Բերսաբեի ամուսնու սպանության համար: Դավիթն անմիջապես պատասխանեց.

«Տիրոջ դեմ մեղք գործեցի» (Բ Թագավորաց 12:13): Նա այլևս չփորձեց թաքցնել իր մեղքը կամ արդարացնել այն: Նա ընդունեց, որ սխալ էր:

Աստված ակնկալում է, որ մենք անկեղծ լինենք, երբ մեզ հանդիմանում են մեր սխալների և մեղքերի համար:

## **Միտք 5. Ինչպե՞ս կարող եմ կանխել, որ սխալ քայլը նորից տեղի չունենա:**

Այս միտքն իմաստ է հաղորդում հանդիմանության ողջ ընթացքին: Հուսով ենք, որ քեզ հանդիմանող անձնավորությունը դա անում է այն պատճառով, որ ուզում է քեզ տեսնել աճելիս: Այս միտքը քո վերաբերմունքների մեջ շատ կարևոր է, եթե հանդիմանությունը քեզ իսկապես պետք է օգուտ տա:

«Իսկ ի՞նչ անեմ, եթե այդ անձնավորությունը պարզապես քննադատում է ինձ», կարող ես ասել դու: Այս մտքի շուրջ խորհելը՝ *«Ինչպե՞ս կարող եմ կանխել, որ սխալ քայլը նորից տեղի չունենա»*, կարող է քեզ օգնել՝ մեղմել քեզ հանդիմանողի բացասական մոտեցման ցավը:

Այս մտքի շուրջ խորհելիս այն ուղղիր նաև Աստծուն: Խնդրի՛ր Աստծուն, որ քեզ տա իմաստություն և հասկացողություն, թե ինչպես կարող ես աճել այս փորձառության միջոցով:

Այնքան կարևոր է, որ դու հետևյալ վերաբերմունքն ունենաս. «Ես ուզում եմ սովորել: Ես ուզում եմ, որ Աստված սովորեցնի ինձ»: Այսպիսի վերաբերմունքը կարող է ցավոտ հանդիմանությունը վերափոխել դրական փորձառության: Եթե դու իրոք ուզում ես աճել, ապա պետք է թույլ տաս, որ մարդիկ ուղղեն քեզ:

Սպորտի գերաստղերն անգամ ունեն մարզիչներ և մարզական խորհրդատուներ, որոնք ուղղություն են ցույց տալիս նրանց և օգնում են ինքնազարգացման ճանապարհներ գտնել: Դու ուզո՞ւմ ես առաջընթաց ունենալ մեծության ճանապարհին: Թո՛ւյլ տուր մարդկանց՝ օգնել քեզ:

Այս վերաբերմունքի մեկ այլ մաս է կազմում հասկանալը, որ եթե մենք պատրաստ ենք թույլ տալ մարդկանց՝ հանդիմանել մեզ փոքր բաների մեջ, ապա ավելի ուշ կարող ենք տեսնել, որ մեծ դասեր ենք սովորել այդ փոքր խնդիրներից: Փոքր խնդրի հետևում եղած սկզբունքը հաճախ մեծ նշանակություն ունի Աստծո համար:

Որպեսզի տարբերությունը զգացվի, 1 ցենտ կամ 1 դոլլար գողանալը կարող է չափից ավելի փոքր թվալ, սակայն էականը այդ փոքր տարբերությունը չէ, այլ այն, որ Աստված ուզում է, որ մենք դա նկատենք և մեր բնավորության մեջ ազնվություն սովորենք:

Եթե մենք թույլ տանք, որ փոքր խնդիրներն աննկատելիորեն անցնեն՝ առանց դրանցից որևէ բան սովորելու, դրանք մեզ ցած կտանեն դեպի ավելի մեծ խնդիրների՝ ավելի մեծ վնասներով:

Միտքը՝ *«Ինչպե՞ս կարող եմ կանխել, որ սխալ քայլը նորից տեղի չունենա»*, կարող է կանխել նաև վիճաբանությունները: Այս միտքը մեր ուշադրությունն ուղղում է դեպի ապագան՝ անցյալին հետ նայելու փոխարեն: Եթե քո ողջ ուշադրությունն ուղղես անցյալին, հեշտ կընկնես վիճաբանության մեջ մանրամասնությունների շուրջ, թե ինչ էր իրականում տեղի ունեցել: Կո՛ւ տուր քո հպարտությունն ու քո վիրավորված զգացմունքները և օգնություն խնդրիր: Առակների գիրքը շատ հուզիչ խոստումներ է տալիս նրանց, ովքեր այսպես են վարվում:

**Առակաց 12:26.**

**«Արդարն իր դրացուն ճանապարհ է ցույց տալիս, բայց ամբարիշտների ճամփան մոլորեցնում է նրանց»:**

**Առակաց 13:14.**

**«Իմաստունի օրենքը կյանքի աղբյուր է մահվան որոգայթներից խույս տալու համար»:**

**Առակաց 15:31-32**

**«Կյանքի հանդիմանությունը լսող ականջն իմաստունների մեջ է բնակվելու: Խրատը մերժողն իր անձն է անարգում, իսկ հանդիմանությունը լսողը հասկացողություն ձեռք կբերի»:**

«Ի՞նչ պետք է ես ասեմ այս հատվածում, երբ ինձ քննադատում են»:

Ոչ-սպառնալից ձայնով դու կարող ես ասել. «Ես ուզում եմ փոխվել այն հարցերի մեջ, որոնք դու նշեցիր: Ես ուզում եմ քեզնից օգնություն խնդրել: Ես շնորհակալ կլինեմ, եթե որևէ խորհուրդ տաս ինձ, թե ինչ կարող եմ անել, որ իմ այս սխալը նորից չկրկնվի»:

Հնարավոր է՝ նրանք քեզ որոշ խորհուրդներ տան: Եթե այո, ուրեմն շատ լավ է: Եթե նրանք ոչ մի խորհուրդ չունեն քեզ համար, ցո՛ւյց տուր նրանց, որ դա նույնպես նորմալ է: Զգո՛ւյշ եղիր, որ դա սխալ վերաբերմունքով չասես. «Եթե դու այդքան խելացի ես, որ տեսնում ես իմ սխալը, ապա ասա՛ ինձ, թե որն է լուծումը: Հակառակ դեպքում՝ գնա՛ գործիդ»: Սա ճիշտ մոտեցում չէ, երբ դիմում ես օգնության համար:

Դու կարող ես օգնություն խնդրել նաև քո ընկերոջից կամ առաջնորդից, ում վստահում ես: Մի՛ վախեցիր դիմել օգնության համար:

Շատ կան բնավորության գծեր, որոնք կապ ունեն քո վերաբերմունքի այս հատվածի հետ, երբ քեզ հանդիմանում են: Ահա՛ մի քանիսը. ազնվություն,

համագործակցություն, հարգանք, անկեղծություն, ստեղծագործական մոտեցում, ջերմեռանդություն և խոնարհություն:

Անպայման շնորհակալություն՝ ևն հայտնիք տվյալ անձնավորությանը նրա տված խորհուրդների համար: Եթե այդ անձնավորությունը ոչ մի խորհուրդ չունի քեզ տալու, ապա պարզապես ասա՛. «Շնորհակալ եմ, որ ուղղեցիր ինձ»: Դու նաև կարող ես խնդրել այդ անձնավորությանն աղոթել քեզ համար:

Այս հինգ մտքերը խորհուրդների ընդամենը մեկ բաժին են կազմում, որոնք կարող են աստվածաշնչյան վերաբերմունք ձևավորել՝ քեզ հանդիմանելիս կամ քննադատելիս դրանք կիրառելու համար: Այլ մտքեր ևս կարող են ներառվել: Դու կարող ես առաջարկել նաև այլ մտքեր, որոնք քեզ համար ավելի օգտակար կլինեն: Շատ լավ է: Կարևորն այն է, որ սկսես զարգացնել և օգտագործել մի վերաբերմունք, որն իսկապես աստվածաշնչյան է:

## **Գ. Որո՞նք են աստվածաշնչյան վերաբերմունք օգտագործելու օգուտները, երբ քեզ հանդիմանում են կամ քննադատում:**

Եթե դու քննադատվելու ժամանակ կարողանում ես պարզորոշ տեսնել աստվածաշնչյան վերաբերմունք օգտագործելու օգուտները, ապա դա պետք է քեզ մղի քո վերաբերմունքը փոխելուն: Ահա մի քանի օգուտներ, որոնք կարող ես ունենալ այս աստվածաշնչյան վերաբերմունքը քո կյանքում կիրառելով:

1. Դու դադարեցնում ես բազմաթիվ ցավալի խնդիրներ, որոնցից մի քանիսը կքննարկենք այս գլխում:
2. Դու ուրախացնում ես Աստծուն: Աստծուն դուր է գալիս, երբ մենք Նրա Խոսքը կիրառում ենք առօրյա կյանքում:
3. Դու կարող ես ցավալի փորձառությունը վերափոխել աճելու հնարավորության: Մա հատկապես ճշմարիտ է, եթե մինչև վերջ հետևում ես վերջին մտքին. «Ինչպե՞ս կարող եմ կանխել, որ սխալ քայլն այլևս չկրկնվի»:
4. Դու կարող ես ամուր ընկերություն սկսել: Եթե սովորես քննադատությունն ընդունել և դրան նայել որպես դրական փորձառության, ապա կկարողանաս ընկերանալ այն անձնավորության հետ, ով հանդիմանել էր քեզ, որ ավելի ուժեղանաս:
5. Դու միշտ պետք է նոր բան սովորես:

## Դ. Այս վերաբերմունքի հետ կապված ի՞նչ խնդիրներ կան:

Գուցե քեզ համար ավելի հեշտ կլինեն գրել հինգ խնդիրներ, որոնք կապ ունեն այս վերաբերմունքի հետ, քան թե հինգ օգուտներ, որոնք կառաջանան հանդիմանություն ստանալիս աստվածաշնչյան այս մոտեցումը օգտագործելու հետևանքով: Երբ փորձես հանդիմանություն ստանալիս օգտագործել աստվածաշնչյան այս վերաբերմունքը, հնարավոր է՝ տարբեր տեսակի խնդիրների հանդիպես: Բավականին դժվար է այս վերաբերմունքը քո կյանքի անբաժան մասը դարձնելը: Դա ժամանակ կպահանջի, և գուցե շատ անգամներ ձախողումներ կունենաս: Սակայն պատրա՛ստ ես շարունակել աշխատել նպատակի ուղղությամբ և սովորել սեփական սխալներից:

Անգամ երբ դու իրոք կիրառում ես աստվածաշնչյան այս վերաբերմունքը, կարող ես խնդիրներ ունենալ: Ահա՛ մի քանի խնդիրներ, որոնք մարդիկ ունեցել են, երբ փորձել են կիրառել այս վերաբերմունքն իրենց առօրյա կյանքում:

Դու կարող ես անձնական մեկնաբանություն գրել դրանցից յուրաքանչյուրի համար՝ նկարագրելով, թե ինչքան հաճախ ես պայքարել դրանց դեմ՝ առանձին-առանձին: Կարող ես գրել նաև առաջընթացի մասին՝ այս խնդիրներից յուրաքանչյուրը հաղթահարելու արդյունքում:

### 1. Բարկություն:

Մեծագույն խնդիրներից մեկը, որ կապ ունի այս վերաբերմունքի հետ, բարկությունն է: Թե՛ դու, թե՛ քեզ հանդիմանող անձնավորությունը կարող եք շատ հեշտությամբ ընկնել բարկությամբ արձագանքելու մեջ: Հակոբոս 1:19-20-ը և Եփեսացիներին 4:26-27-ը խոսում են մեր բարկության մասին:

**Եփեսացիներին 4:26-27.**

**«Խողողացե՛ք և մեղք մի՛ գործեք: Արևը ձեր բարկության վրա մայր չմտնի, և սատանային տեղի մի՛ տվեք»:**

Վերջին համարը շատ հստակ զգուշացում է: Երբ մենք բարկացած ենք, սատանայի համար շատ ավելի հարմար ժամանակ է մեզ փորձելու, որ մեղք գործենք:

Շատ ավելի լավ կլինի տխրությամբ արձագանքել հանդիմանությանը, քան բարկությամբ: Տխրությամբ արձագանքիր, եթե քեզ հանդիմանող անձնավորությունը դա վատ կերպով է անում: Տվյալ անձնավորության վրա բարկանալը չի օգնի՝ հաջորդ անգամ հանդիմանության գործն ավելի արդյունավետ անելու համար:



## 2. Դիմացինը սխալ էր ինձ հանդիմանելու մեջ:

Հանդիմանություն ստանալու հետ կապված մեկ այլ մեծ խնդիր է հանդիսանում տվյալ մարդը, ով հանդիմանում կամ քննադատում է քեզ: Նա սովորաբար դա անում է սխալ ձևով: Բավականին դժվար է հանդիմանությունն ընդունել, երբ այն արվում է ոչ- պատշաճ ձևով: Երբեմն անհնարին է թվում քննադատությունն ընդունել այն պատճառով, թե ինչ ձևով է տվյալ մարդը խոսում քեզ հետ: Այս դեպքում է, որ դու պետք է խնդրես Սուրբ Հոգուն՝ ուժ տա քեզ, որպեսզի աստվածաշնչյան վերաբերմունքով արձագանքես: Նայի՛ր Առակաց 20:22:

Երբ քեզ սխալ ձևով են հանդիմանում, արձագանքի՛ր ներողամտությամբ: Երբ Հիսուսը խաչի վրա էր, աղոթեց. «Հայր, ների՛ր դրանց, քանի որ չգիտեն, թե ինչ են անում» (Ղուկ. 23:34): Մա կարող է լինել քո աղոթքն այն անձնավորության համար, ով քեզ սխալ ձևով է հանդիմանում: Հնարավոր է՝ նրանք քեզ հանդիմանելու ավելի լավ ձև չգիտեն:

## 3. Տվյալ անձի ունեցած փաստերը ճիշտ չեն:

Քանի անգամ ես դու ասել. «Նրա ունեցած փաստերը ճիշտ չեն: Նա իրականում չգիտի, թե ինչ է տեղի ունեցել»: Նախքան անմիջապես այս եզրակացության գալն ու փորձելը՝ դիմացինին ուղղելու, թո՛ւ ւյլ տուր, որ նա ավարտի այդ պատմության իր իմացած կողմը: Մա կարող է վիթխարի համբերություն և ինքնատիրապետում պահանջել, սակայն կկանխի հետագա վիճաբանությունն ու իրար չհասկանալը:

Ոսկե կանոնը, Ղուկաս 6:31-ում, շատ տեղին է այստեղ: Պատասխանի՛ր քեզ հանդիմանող մարդուն այնպես, ինչպես կցանկանայիր, որ նա քեզ պատասխաներ, եթե դու նրան հանդիմանելիս լինեիր:

## 4. Ես սխալ չեի:

Աստված գիտի ողջ ճշմարտությունը: Լսի՛ր Աստծուն և այն անձնավորությանը, ով խոսում է քեզ հետ: Եթե դու ճիշտ ես, ուրեմն Աստված քո դիմացինին կօգնի՝ տեսնելու ողջ եղելությունը: Եթե մարդիկ գրպարտում էին Հիսուսին, ինչո՞ւ ես ակնկալում, որ կյանքը պետք է տարբեր լինի քեզ համար:

## 5. Նրանք ինձ չեն հավատա, եթե ես աստվածաշնչյան վերաբերմունքով պատասխանեմ:

Հնարավոր է՝ դու ճիշտ ես: Կան մարդիկ, որոնք երբևէ չեն հանդիպել մեկին, ով աստվածաշնչյան վերաբերմունքով է արձագանքել քննադատությանը: Սակայն եթե դու հանդարտ լինես և շարունակես աստվածաշնչյան վերաբերմունք կիրառել, Աստված քեզ կօգնի հաղթահարել այդ իրավիճակը:

Քո պատասխանատվությունը չէ՝ համոզել մարդկանց, որպեսզի հավատան, որ դու անկեղծ ես:

## 6. Ես մոռացա կիրառել իմ նոր վերաբերմունքը, երբ ինձ հանդիմանում էին:

Մի՛ գարմացիր, որ կարող ես մոռանալ՝ կիրառել քո նոր վերաբերմունքը, երբ ինչ-որ մեկը քննադատում է քեզ: Կարևորն այն է, որ ամեն օր շարունակաբար վերանայես քո նոր վերաբերմունքը: Ինչքան շատ ես դու լցնում քո միտքն այս նոր վերաբերմունքով, այնքան հեշտ կլինի ճիշտ ժամանակին այն կիրառել:

## 7. Այն անձնավորությունը, ով քննադատում է ինձ, չի ուզում ինձ օգնել:

«Նա ընդամենը փորձում է ստորացնել ինձ: Նա իրականում անհանգստացած չէ, որ ինձ օգնի»: Երբեմն մարդիկ քեզ քննադատելիս կամ հանդիմանելիս սխալ շարժառիթներ կունենան: Հնարավոր է՝ նրանք ևս ունենան նույն խնդիրները, որի համար քեզ մեղադրում են: Դու պատասխանատու ես քո սեփական թերություններն ու տկարություններն ուղղելու հարցում: Թող Սուրբ Հոգի՛ն գործի այդ մարդու հետ՝ իր խնդիրների համար: Մի՛ փորձիր հանդիմանել այդ մարդուն, երբ նա հանդիմանում է քեզ:

Ղուկաս 6:27-28-ում Հիսուսը գործնական խորհուրդ է տալիս, թե ինչպես վարվել այն մարդկանց հետ, ովքեր քննադատում են քեզ և դժվարացնում քո կյանքը:

Ղուկաս 6:27-28.

«Բայց Ես ձեզ՝ լսողներիդ ասում եմ. «Միրեցե՛ք ձեր թշնամիներին, բարի՛ք արեք ձեզ ստողներին: Օրհնեցե՛ք ձեզ անիծողներին և աղոթե՛ք նրանց համար, ովքեր ձեզ նեղություն են տալիս»:

## 8. Ես վիրավորվում եմ, երբ ինձ քննադատում են:

Մեզնից շատերի համար դժվար կլինի հետևյալն ասել. «Իմ հպարտությունը խոցվում է, երբ ինչ-որ մեկն ինձ հանդիմանում է»: Իսկ եթե մեզ զրպարտել են, ապա միայն մեր հպարտությունը չէ, որ խոցվել է: Մակայն հաճախ մեր հպարտությունն է, որ մեզ ստիպում է բարկությամբ պատասխանել այն անձնավորությանը, ով քննադատում է մեզ: Իրականում հարցը հետևյալում է՝ դու ուզում ես աճել, թե՛ պարզապես պաշտպանել քո հպարտությունը:

## 9. Ի՞նչ անեն, եթե իմ առաջնորդն ինձ ասում է, որ մեղք գործեմ:

Հազվադեպ է պատահում, որ քո առաջնորդը քեզ ասի, որ անես մի բան, որ քո կարծիքով մեղք է: Դու մերժում ես, և քո առաջնորդը քեզ հանդիմանում է, որ այնպես չես արել, ինչպես նա է քեզ ասել: Ի՞նչ պետք է անես դու: Սա դժվար իրադրություն է, և դու պետք է զգուշությամբ գնահատես իրավիճակը և որոշես՝ արդյո՞ք դա իրականում մեղք է: Գուցե դու ցանկանաս այդ խնդիրը քննարկել մեկ այլ քրիստոնյայի հետ, ում դու վստահում ես:

Այս խնդիրն ավելի մանրամասնորեն քննարկված է *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացում և վերնագրված է՝ Հնազանդություն մարդուն: Երեք մարդ Հին Կտակարանում հանդիպեցին նման մի իրավիճակի: Դանիել մարգարեության երրորդ գլխում կարդում ենք այն պատմությունը, թե ինչպես Միսաքը, Սեդրակն ու Աբեդնագովը արձագանքեցին այս խնդրին:

## Ե. Ինչպե՞ս ես սկսեմ զարգացնել այս վերաբերմունքը

Եթե դու ճշմարիտ քրիստոնյա ես, ապա այս վերաբերմունքը զարգացնելը քեզ համար կարող է մեծ մարտահրավեր լինել: Ահա՛ մի քանի մտքեր, թե ինչից դու կարող ես սկսել: Հիշի՛ր, մի քանի օրեր կամ շաբաթներ կպահանջվեն, մինչև կվարժվես այս նոր վերաբերմունքին: Բայց դու պետք է ինչ-որ տեղից սկսես և փոքր քայլերով առաջ գնաս:

1. Անգի՛ր արա այն մտքերը, որոնք ձևավորում են աստվածաշնչյան այս վերաբերմունքը:
2. Օրվա ընթացքում մի քանի անգամ վերանայի՛ր այս վերաբերմունքը:
3. Անգի՛ր արա այն համարները, որոնք համընթաց են այդ մտքերի հետ:
4. Նայի՛ր մյուսներին, ովքեր հանդիմանություն ստանալիս պատասխանում են աստվածաշնչյան վերաբերմունքով:
5. Վերանայի՛ր այն իրավիճակները, որոնցում դու վերջերս ես քննադատվել կամ հանդիմանություն ստացել:

Դու չես կարող հաջողությամբ գործի դնել այս նոր վերաբերմունքի բոլոր հինգ բաժինները միանգամից: Սակայն յուրաքանչյուր իրավիճակից հետո, երբ քեզ քննադատեն կամ հանդիմանեն, կա՛նգ առ և գնահատի՛ր, թե դու ինչ ասացիր և արեցիր: Ի՞նչ էիր դու մտածում, երբ քեզ հանդիմանում էին:

Հիմա մտքում վերակենդանացրո՛ւ այն իրավիճակը, սակայն այս անգամ կիրառի՛ր աստվածաշնչյան նոր վերաբերմունքը: Դու ի՞նչ կասեիր կամ կանեիր այլ կերպ: Այս տեսակի պատկերացումը քեզ կօգնի տեսնել, թե ինչպես կարող ես կիրառել նոր վերաբերմունքը քո առօրյա կյանքում: Այս տեսակի նախագիծը բացատրվում է սույն դասընթացի Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-ում:

**Ունենալ աստվածաշնչյան վերաբերմունք, երբ ինձ  
հանդիմանում են կամ քննադատում:**

Իմ մտքերը	Զգացմունքները	Ներքին դրական որակ	Ինչ պետք է ես ասեմ
1. Երբ ինձ հանդիմանում են: Առակաց 10:17		Զգոնություն Զգայունություն	Ոչ մի բան
2. Ես ուշադիր կլսեմ		Անկեղծություն Հարգանք Համբերություն Հասկացողություն	Ոչ մի բան
3. Ես շնորհակալ եմ, որ նա ինձ հանդիմանում է:	Ուրախություն	Երախտագիտություն Քաղաքավարություն Անկեղծություն	Շնորհակալ եմ այս հարցը բարձրացնելու համար, <i>կամ՝</i> Ես գնահատում եմ Ձեր հանդիմանությունը
4. Ես սխալ էի: (Ի՞նչ եմ ես <u>արել</u> , որ նրան ստիպել է մտածել, որ ես սխալ եմ <u>արել</u> )	Տխրություն Հանցավորություն	Խոնարհություն Ազնվամտություն Զգայունություն Զանազանելու կարողություն Համարձակություն Օբյեկտիվություն Ազնվություն Պատասխանատվություն	Քո ասածից ես հասկացա...  Դու ճիշտ ես, ես սխալ էի
5. Ինչպե՞ս կարող եմ կանխել, որ այս սխալը նորից տեղի չունենա:	Ուրախություն Սեր	Զերմեռանդություն Ոգեշնչվածություն Զանազանելու կարողություն Ստեղծագործական մոտեցում Համագործակցություն Ճկունություն Անկեղծություն Հարմարվողականություն  Օբյեկտիվություն Համբերություն Կայունություն Հարգալից վերաբերմունք	Ես ուզում եմ քեզ խնդրել, որ օգնես ինձ: Ես, իրոք, շնորհակալ կլինեի քո տված ցանկացած խորհրդի համար, թե ինչպես կարող եմ կանխել, որ այդ սխալը նորից տեղի չունենա:

**Ունենալ աստվածաշնչյան վերաբերմունք, երբ ինձ  
հանդիմանում են կամ քննադատում:**

Ի՞նչ պետք է ես անեմ	Աստվածաշնչյան համարներ	Հին վերաբերմունք (հին մտքեր և գործողություններ)
1. Նայի՛ր այդ մարդուն: Ցո՛ւյց տուր, որ դու ուշադիր ես նրա հանդեպ:	Առակաց 10:17	Ինչո՞ւ է նա ինձ ստորացնում:
2. Շարունակի՛ր նայել այդ մարդուն: Ուշադի՛ր լսիր: Հանդա՛րտ եղիր, մի՛ հեռացիր:	Հակոբոս 1:19 Առակաց 13:3 Առակաց 15:28	Մի՛ լսիր այդ մարդուն: Փորձի՛ր ընդհատել նրան:
3. Ընկերություն և գնահատա՛նք ցույց տուր քո դեմքի արտահայտությամբ և ձայնի տոնայնությամբ:	Ա Թեսաղոնիկեցիներին 5:18	Բարկացի՛ր այդ մարդու վրա: Քննադատի՛ր և մեղադրի՛ր այդ մարդուն:
4. Դեմքի արտահայտությամբ ցո՛ւյց տուր, որ տխուր ես:	Փիլիպպեցիների 2:2,3 Առակաց 28:13 Հակոբոս 4:9	Հերքի՛ր մեղադրանքները:  Սկսի՛ր վիճաբանել այդ մարդու հետ:
5. Դեմքի արտահայտությամբ նախանձավորությո՛ւն ցույց տուր:	Բ Կորնթացիներին 8:11 Առակաց 12:26 Առակաց 13:14 Առակաց 15:31-32 Առակաց 10:17 Հակոբոս 1:22-25	Այդ մարդուն ասա՛, որ դա իր գործը չէ:  Մատնացո՛ւյց արա այն խնդիրները, որ այդ մարդն ունի իր կյանքում:

## Գլուխ 4

### Ունենալ ճիշտ վերաբերմունք ուրիշին հանդիմանելիս

Քանի՞ քրիստոնյայի ես դու հանդիպել, որոնք մշտապես աստվածաշնչյան վերաբերմունք և մեթոդ են կիրառում ինչ-որ մեկին հանդիմանելիս: Դու դժվարանո՞ւմ ես հիշել մարդկանց, ում անունները կկարողանայիր գրել այդ ցուցակում: Շատ քրիստոնյաներ ճիշտ նույն ձևով կդժվարանային այդպիսի ցուցակ կազմել: Ինչո՞ւ:

Քրիստոնյաները հաճախ են անտեսում ուշադիր ուսումնասիրելը, թե ի՞նչ է Աստված ասում մարդկանց հանդիմանելու վերաբերյալ: Շատերը, ովքեր գիտեն, թե ի՞նչ է ասում Աստվածաշունչը մարդկանց հանդիմանելու վերաբերյալ, չեն կիրառում այդ ցուցումներն իրենց առօրյա կյանքում:

Որոշները վախենում են հանդիմանել մարդկանց, ովքեր սխալ են թույլ տվել: Իսկ որոշ մարդիկ էլ ունեն հակառակ վերաբերմունքը. նրանք սիրում են հանդիմանել մարդկանց: Դա կյանքում նրանց «առաքելությունն» է՝ Աստծո ուստիկանի նման միշտ ուշադիր հետևել, թե մարդիկ ինչ սխալ են անում:

Որպես ճշմարիտ քրիստոնյա՝ դու պետք է պատրաստ լինես հանդիմանությունն ընդունել առանց պատճառաբանությունների: Իսկ երբ պատշաճ է, պետք է պատրաստ լինես նաև հանդիմանել մեկ ուրիշին:

Մարդկանց հանդիմանելու այս վերաբերմունքը շատ կարևոր է յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյայի կյանքում: Մեր կյանքը շատ ավելի երջանիկ կլիներ, եթե մենք մարդկանց հանդիմանելիս աստվածաշնչյան վերաբերմունք կիրառեինք: Ե՛կ ավելի հանգամանալից դիտարկենք մարդկանց հանդիմանելու այս ամբողջ ասպարեզը:

#### Ա. Ո՞ւմ պետք է ես հանդիմանեմ:

«Որպես քրիստոնյա՝ ունե՞մ ես պատասխանատվություն կամ ազատություն հանդիմանելու ինչ-որ մեկին, երբ նա սխալ է վարվում»: Երբ լսում ես, թե ինչպես են մարդիկ արձագանքում հանդիմանություն ստանալիս, թվում է, թե այս հարցի պատասխանը «ո՛չ»-ն է: Ի՞նչ է ասում Աստված այս մասին:

1. Հոգևորապես հասուն քրիստոնյաները պետք է հանդիմանեն այն քրիստոնյային, ով մեղք է գործել:

**Գաղատացիներին 6:1.**

**«Եղբայրներ՛ ը, եթե մեկը հանկարծ մի հանցանքից հաղթահարվի, դուք, որ հոգևոր եք, նմանին վերականգնեք հեգուռայան հոգով՝ ինքներդ զգույշ լինելով, որ դուք էլ փորձության չենթարկվեք»:**

2. Եթե իշխանություն ունես ինչ-որ մեկի հանդեպ, դու պատասխանատվություն ունես հանդիմանելու այդ անձնավորությանը, երբ ինչ-որ բան սխալ է անում:
3. Ծնողները պատասխանատվություն ունեն հանդիմանելու իրենց երեխաներին:

**Առակաց 13:24.**

**«Գավազանը խնայողն աստում է իր որդուն, բայց նրան սիրողը վաղ է խրատում»:**

4. Քո տան կամ ներկա բնակավայրի կանոնները հստակորեն նշում են, թե դու ինչ պատասխանատվություն ունես հանդիմանելու նրանց, ովքեր ինչ-որ բան սխալ են անում:

Հավանաբար քո ծնողները քեզ տվել են կանոններ՝ կարգավորելու, թե ո՛ւմ, ե՛րբ և ինչպե՛ս պետք է հանդիմանես ձեր տանը: Թի՛ն Չելլենջի որոշ կենտրոններ յուրաքանչյուր ուսանողի տալիս են պատասխանատվություն՝ խնամք տանելու իրենց խմբի մյուս անդամների համար: Եթե խմբի որևէ անդամ չի իրականացնում այս պատասխանատվությունը, ապա նա համարվում է խնդրի մի մաս և նկատողություն է ստանում այն բանի համար, որ չի հանդիմանել տվյալ անձնավորությանը, ում մասին գիտեր, որ սխալ է արել:

Անձանոթ տեղերում մարդիկ պատասխանատվություն չունեն ուրիշներին հանդիմանելու: Կարող են խնդիրներ ունենալ, եթե փորձեն հանդիմանել ինչ-որ մեկին, ով սխալ է արել: Դու պետք է իմանաս այն տեղի կանոնները, որտեղ ապրում ես: Քո առաջնորդի հետ ճշտի՛ր, թե ո՛րն է քո պատասխանատվությունը, երբ հարցը վերաբերում է սխալներ արած ինչ-որ մեկին հանդիմանելուն:

## **Բ. Ինչպիսի՞ աստվածաշնչյան վերաբերմունք պետք է ունենալ մարդկանց հանդիմանելիս:**

Մարդկանց հանդիմանելու բազում մեթոդներ կան: Սակայն մենք կարող ենք նշել մի քանի հիմնական մտքեր, որոնք պետք է մաս կազմեն քո վերաբերմունքի մեջ, երբ դու հանդիմանես ինչ-որ մեկին: Այս մտքերը կարող են կիրառվել անկախ նրանից, թե աստվածաշնչյան որ մեթոդն էս դու օգտագործում մարդկանց հանդիմանելու համար:

**Ունենալ աստվածաշնչյան վերաբերմունք մարդկանց հանդիմանելիս:**

1. Այս մարդն Աստծո հատուկ ընկերներից մեկն է:  
Ես ուզում եմ, որ կարողանամ նրա մասին լավ վկայություն տալ:
2. Ի՞նչ սխալ է արել այս մարդը:
3. Ո՞րն է Աստծո ձևն այս խնդիրն ուղղելու հարցում:
4. Ինչպե՞ս կարող եմ օգնել այս մարդուն՝ հետևել Աստծո ճանապարհին:

Ավելի հանգամանալից դիտարկենք այս մտքերից յուրաքանչյուրը:

**Միտք 1. Այս մարդն Աստծո հատուկ ընկերներից մեկն է:  
Ես ուզում եմ, որ կարողանամ նրա մասին լավ  
վկայություն տալ:**

Աստված խորապես սիրում է տվյալ անձնավորությանը՝ անկախ այն բանից, թե ինչ սխալ է արել նա: Դու կարիք ունես հենց սկզբից նկատի ունենալ, որ խոսում ես Աստծո հատուկ ընկերներից մեկի հետ: Այս միտքը նաև պարզաբանում է, թե ինչո՞ւ պետք է հանդիմանես այդ մարդուն: Քո դրդապատճառը պետք է լինի այդ մարդուն օգնելը, որպեսզի նա ավելի քրիստոսակերպ դառնա, որպեսզի դու կարողանաս լավ վկայություն տալ նրա մասին: Շատ ավելի գայթակղիչ է սխալ դրդապատճառ ունենալը, երբ հանդիմանում ես ինչ-որ մեկին: Օրինակ, դու դա կարող ես այնպես անել, որ տվյալ մարդը վատ վիճակի մեջ հայտնվի: Մենք չպետք է թույլ տանք, որ այս դրդապատճառը ղեկավարի մեզ:

**Միտք 2. Ի՞նչ սխալ է արել այս մարդը:**

Ինչպես տեսնում ես՝ այս միտքը հարց է: Շատ հաճախ սկսում ենք հանդիմանել դիմացինին՝ առանց այս հարցը տալու: Մենք համարում ենք, որ գիտենք դրա պատասխանը: Մենք անցնում ենք մեր տեսածի կամ լսածի կողքով և համարում ենք, որ ամեն բան ճիշտ գիտենք:

Փոխանակ այդ մարդուն ասելու, թե ի՞նչն է նա սխալ արել, ավելի լավ կլինի խնդրել նրան՝ պատմել, թե ի՞նչ է նա ասել կամ արել: Հնարավորություն ևն տուր նրան բացատրելու, թե ի՞նչ էր նա այդ պահին անում: Պատմությունը նրա տեսանկյունից լսելուց հետո դու շատ ավելի լավ կկարողանաս պատասխանել հարցին. «Ի՞նչ սխալ է արել այս մարդը»:

Ի՞նչ կանես, եթե պարզես, որ դու շփոթել ես փաստերը: Քանի դեռ մեղադրանք չես հնչեցրել, հավանաբար ավելի ճիշտ կլինի փակել խոսակցությունը: Սակայն եթե դու արդեն մի քանի խիստ հայտարարություններ ես արել նրա ենթադրյալ



սխալների մասին, իսկ հետո միայն պարզել, որ դա այդպես չի եղել, այդ դեպքում ստիպված կլինես ներողություն խնդրել սխալ մեղադրանքների համար: Սա շատ ստորացուցիչ է, դու դա հավանաբար գիտես քո անցած փորձառությունից:

Եթե ուզում ենք մարդուն օգնել, որպեսզի նա գիտակցի, թե ինչն է սխալ արել, ապա մենք կարիք ունենք զգույշ լինելու, որ չդատապարտենք նրան: Մեր պատասխանատվությունն է՝ օգնել նրան, որպեսզի նա ուղղի այդ խնդիրը, չպետք է նրա մոտ վրեժխնդրության զգացում առաջացնել:

Եթե դու տվյալ անձնավորության ղեկավարն ես, հնարավոր է՝ նաև ստիպված լինես պատժել նրան իր սխալ արարքի համար: Զգո՛ւյշ եղիր, որպեսզի քո զգացմունքները չղեկավարեն քո մտքերն ու գործողությունները: Թո՛ւյլ տուր այդ մարդուն՝ տեսնել քո տխրությունը, այլ ոչ թե բարկությունը կամ ծաղրանքն ու հպարտությունը, որ նրան բռնել էս սխալի մեջ:

### **Միտք 3. Ո՞րն է Աստծո ձևն այս խնդիրն ուղղելու հարցում:**

Մենք պատասխանատվություն ունենք անելու ավելին, քան պարզապես դիմացինի սխալը մատնացույց անելն է: Գաղատացիներին 6:1-ն ասում է. «Դուք, որ հոգևոր եք, նմանին վերականգնեք հեզության հոգով»: Եթե Աստված հենց հիմա այդ անձնավորության հետ խոսելու լիներ, ի՞նչ կասեր, որ օգնել նրան՝ ուղղելու համար այդ խնդիրը: Ի՞նչ ձևով Աստված այդ խորհուրդը նրան կտար:

Մենք կարիք ունենք խորապես մտածելու, թե աստվածաշնչյան ո՞ր սկզբունքներն են վերաբերում քննարկվող խնդրին: Միշտ չէ, որ տվյալ հատվածում պետք է աստվածաշնչյան համարներ մեջբերենք այդ մարդու համար:

### **Միտք 4. Ինչպե՞ս կարող եմ օգնել այս մարդուն՝ հետևել Աստծո ճանապարհին:**

Կարող է հեշտ լինել մտքումդ այս հարցը տալը, երբ պետք է ինչ-որ մեկին հանդիմանես: Սակայն դու իրոք կարո՞ղ ես օգնել այդ անձնավորությանը, որպեսզի նա հետևի Աստծո ճանապարհին: Դա շատ ավելի դժվար կլինի, քան պարզապես այդ հարցի շուրջ մտածելը: Նրա պատրաստակամությունը՝ հետևել Աստծո ճանապարհին, ուղղակի ազդեցության կենթարկվի այն բանից, թե ինչպես կհանդիմանես նրան: Ահա թե ինչու է Գաղատացիներին 6:1-ն ասում՝ հեզության հոգով վերականգնել տվյալ մարդուն ճիշտ ճանապարհի վրա:

Աստծո ճանապարհին վերադարձնելու այս գործընթացը կարող է ավելի շատ ժամանակ պահանջել, քան մարդուն ասելը, թե ինչն է նա սխալ արել: Սակայն եթե մենք իրոք տրվել ենք աստվածաշնչյան վերաբերմունք դրսևորելուն, ապա պետք է ժամանակ հատկացնենք՝ օգնելու տվյալ անձնավորությանը՝ դառնալ ճիշտ ուղու վրա:

«Ի՞նչ անեմ, եթե այդ մարդը մերժի իմ օգնությունը»: Դու չես կարող քո օգնությունը պարտադրել նրան: Եթե պատրաստակամ ես օգնելու և ճիշտ վերաբերմունք ցուցաբերելու, նա կարող է հետագայում միտքը փոխել և վերադառնալ քեզ մոտ՝ օգնություն խնդրելու: Բայց եթե դու հարկադրես նրան քո օգնությունը կամ քննադատես քո օգնությունը չընդունելու համար, դրանով մեծապես կխանգարես այդ մարդու հետ ունեցած քո շփմանը:

Եթե անգամ դու տվյալ անձնավորությանը մեղմ ու բարի ձևով հանդիմանես, հնարավոր է՝ դարձյալ բարկացած պատասխան ստանաս նրանից: Նա կարող է ամիսներ կամ տարիներ սրտում պահել այդ բարկությունը: Դու պետք է կենտրոնանաս այն բանի վրա, ինչ Աստված է քեզ ասել, որ անես: Թո՛ւ ւյլ տուր, որ Աստվա՛ծ զբաղվի քո հանդեպ մարդկանց արձագանքներով:

Այս չորս պարզ մտքերը քեզ տալիս են աստվածաշնչյան վերաբերմունք, որը դու կարող ես օգտագործել ամեն անգամ, երբ ինչ-որ մեկին հանդիմանում ես: Եթե հայացք զցես այն տարբեր իրավիճակների վրա, երբ հանդիմանում ես մարդկանց, դու անմիջապես կտեսնես, որ դրանք բոլորը միանման չեն: Որոշները վերաբերում են փոքր խնդիրների, որ մարդիկ արել են: Իսկ որոշ դեպքերում դրանք մեծ սխալների հետ կապ ունեն, որոնք դու փորձել ես ուղղել: Յուրաքանչյուր իրավիճակում մենք կարիք ունենք շարունակաբար աղոթելու. «Աստվա՛ծ իմ, պահի՛ր ինձ ճիշտ ուղու վրա: Օգնի՛ր ինձ ճիշտ վերաբերմունք ունենալ այս մարդուն հանդիմանելիս»:

Այժմ դիտարկենք մի քանի մեթոդներ և ուղեցույցներ, որոնք դու կարող ես օգտագործել տվյալ մարդուն հանդիմանելիս: Ի՞նչ պետք է դու *սսես* կամ *անես*, երբ կիրառում ես աստվածաշնչյան այս վերաբերմունքը:

## Գ. Ինչպե՞ս ես պետք է հանդիմանեմ մարդկանց:

«Կա՞ պարզ մի ձև կամ մեթոդ, որ ես կարող եմ ամեն անգամ օգտագործել, երբ ինչ-որ մեկին հանդիմանում եմ»: Հիսուսի կյանքին ուղղված արագ հայացքը կպատասխանի այս հարցին: Ո՛չ, կան շատ տարբեր մեթոդներ, որոնք կարող ենք օգտագործել մարդուն հանդիմանելու համար:

### 1. Երեք բաներ՝ մարդկանց հանդիմանելու ճիշտ մեթոդ ընտրելու համար:

«Ինչպե՞ս իմանամ, թե որ մեթոդը ես պետք է կիրառեմ»: Ահա՛՛ երեք կետեր, որոնք քեզ կօգնեն որոշել, թե ինչպես հանդիմանես ինչ-որ մեկին:

#### Ա. Ո՞ւմ եմ ես հանդիմանում:

Դու չես կարող շարունակ նույն մեթոդն օգտագործել բոլորին հանդիմանելու համար: Յուրաքանչյուր անձնավորություն տարբեր է մյուսներից:

Մի անձնավորություն կարձագանքի շատ մեղմ մոտեցմանը: Մեկ ուրիշը կարիք կունենա ավելի ուժեղ մոտեցման: Մի անգամ Հիսուսը շատ խիստ խոսեց, երբ հանդիմանում էր Պետրոսին՝ Իր տասներկու աշակերտներից մեկին:

**Մատթեոս 16:23.**

**«Իսկ Նա, դառնալով Պետրոսին, ասաց. «Ետն՛ս անցիր, Սատանա՛, դու գայթակղություն ես Ինձ համար, որովհետև դու ոչ թե Աստծո բաներն ես խորհում, այլ՝ մարդկանց»:**

Հիսուսն այս նույն մոտեցումը չօգտագործեց, երբ հանդիմանում էր մյուսներին:

Երբ դու մտածում ես, թե ինչպես պետք է հանդիմանես որևէ անձնավորության, ապա պետք է զգուշությամբ որոշես, թե որն է լավագույն ձևն այդ մարդուն մոտենալու համար: Խնդրի՛ր Սուրբ Հոգուն, որ քեզ օգնի՝ այդ մարդուն ավելի լավ ճանաչելու համար:

## **Բ. Ինչքա՞ն լուրջ է տվյալ անձնավորության կատարած սխալը:**

Երբ քո երեխան չափից ավելի շատ է կարագ քում հացի վրա, դու ուղղում ես նրան: Սակայն քո մոտեցումը բավականին տարբեր կլինի, եթե քո երեխան մեքենա գողանա ու ջարդուփշուր անի այն: «Հանցանքի» լրջությունից է կախված, թե ինչ մոտեցում դու ցույց կտաս տվյալ անձնավորությանը:

Քո կյանքում հավասարակշռություն գտնելն իրոք մարտահրավեր է այս ասպարեզում: Հենց միայն այն, որ ինչ-որ մեկը սխալ է անում, չի նշանակում, որ դու շարունակ պետք է հանդիմանես նրան: Այս միտքը հատկապես ճիշտ է, եթե տվյալ անձնավորությունը չի խախտում Աստծո օրենքները:

Մի համընդհանուր «խնդիր», որ որոշ մարդիկ ունեն, ամիսներ կամ տարիներ առաջ տեղի ունեցած պատմությունները պատմելն է: Թեհմինեն սկսում է իր պատմությունը. «Ես հիշում եմ, երեք տարի առաջ էր, երբ մենք արձակուրդում էինք: Երեքշաբթի էր, և մենք գնացել էինք ծովափ լողալու»:

«Ճիշտ չէ, Թեհմին,- ընդհատում է ամուսինը,- չորեքշաբթի էր, երբ մենք գնացինք ծովափ՝ լողալու»:

Երբեմն մենք բռնվում ենք ցանկությամբ՝ ուղղելու մանրամասներ, որոնք իրականում կարևոր չեն: Այս պատմությունը լսելիս քեզ համար իրոք կարևոր է՝ այդ օրը երեքշաբթի՝ էր, թե՞ չորեքշաբթի: Կան թերություններ, որոնց համար կարիք չկա հանդիմանելու: Այնպիսի իրավիճակներում, ինչի մեջ Թեհմինեն ու նրա ամուսինն էին հայտնվել, հանդիմանելը կարող է հեշտությամբ ավելի մեծ խնդիր ստեղծել, քան թե այն հարցը, որին հետևել է հանդիմանությունը:

Թեհմինեն և նրա ամուսինը հեշտությամբ վեճի կբռնվեն. արդյոք երեքշաբթի՞ էր այդ օրը, թե՞ չորեքշաբթի: «Ես իրոք հոգնել եմ քեզնից, որ ամեն անգամ ուղղում ես ինձ իմ ընկերուհիների մոտ», - ավելի ուշ կասի Թեհմինեն իր ամուսնուն:

Եվ այսպես, Թեհմինեի ամուսնու՝ հանդիմանելու ցանկությունը կարող է ավելի մեծ խնդիր լինել, քան Թեհմինեի թերությունը: Դու մարդկանց հանդիմանելու մոդում ես զգում: Ինչու: Ինչ ես դու փորձում ապացուցել:

Մակայն որոշ մարդկանց համար էլ հակառակը կարող է ճիշտ լինել: Երբ նրանց սիրելին բռնվում է լուրջ մեղքի մեջ, նրանք, միևնույն է, շարունակում են լռել: Նրանք երբեք չեն հանդիմանում իրենց սիրելիներին: Պարզապես արդարացնում են նրանց սխալ արարքները:

Մենք կարիք ունենք հավասարակշռությունը գտնելու, և Աստված կօգնի քեզ՝ հասկանալու, թե երբ պետք է խոսես և հանդիմանես ինչ-որ մեկին և երբ պետք է լուռ մնաս:

### **Գ. Քո անհատականությունը կազդի այն մեթոդի վրա, որ դու օգտագործում ես:**

Եթե դու երկու մետր հասակ ունես և 120 կգ-անոց մկանային կառուցվածք, ապա մարդիկ, հավանաբար, հանդարտ կլսեն քեզ, երբ դու հանդիմանես նրանց: Բայց երբ դու մենակ ես, մեկ ու կես մետր հասակ ունես և 50 կգ ես կշռում, քո ֆիզիկական չափերը, հնարավոր է, նույն պատկառանքը չներշնչեն, ինչ քո բարձրահասակ ընկերոջ չափերը: Քո՝ կին կամ տղամարդ լինելն էլ կազդի այն բանի վրա, թե ինչպես մարդիկ կարձագանքեն քո հանդիմանությանը:

Քո անհատականությունը նույնպես ուղղակի ազդեցություն կունենա այն մեթոդի վրա, որ օգտագործում ես մարդկանց հանդիմանելիս: Եթե դու իշխող բնավորություն ունես և ակնկալում ես, որ մարդիկ պիտի ցատկեն, երբ դու ասես. «Ցատկի՛ր», ուրեմն բավականին խիստ կլինես մարդկանց հանդիմանելիս: Իսկ եթե դու հանդարտ, երկչոտ բնավորություն ունես, ապա հազվադեպ կօգտագործես կտրուկ մոտեցում մարդկանց հանդիմանելիս: Որոշ մարդիկ «բնածին» քննադատներ են: Նրանք ոչ մի վախ չունեն մարդկանց քննադատելու հետ կապված: Մյուսները, միզուցե, երբեք չհանդիմանեն մարդկանց, եթե ընտրության հնարավորություն ունենան:

Հենց միայն այն, որ քո առաջնորդը հաջողության է հասնում մարդկանց հանդիմանելիս՝ որևէ կոնկրետ մեթոդ օգտագործելով, դեռ չի նշանակում, որ դու նույնպես կարող ես հաջողության հասնել նույն մեթոդն օգտագործելով:

Ուրեմն ինչպե՞ս կարող ես հաջողության հասնել մարդկանց հանդիմանելիս: Ամենակարևոր որակը զանազանելու ընդունակություն զարգացնելն է, այն է՝ սովորել, թե ինչպես կարելի է բացահայտել Աստծո ձևը յուրաքանչյուր իրավիճակի համար: Աստված խոստացել է մեզ առաջնորդել ողջ ճշմարտության մեջ: Նա կարող է մեզ օգնել՝ հաջողության հասնել մարդկանց հանդիմանելու հարցում, երբ նրանք ինչ-որ բան սխալ են անում: Առանցքային միտքն այստեղ այն է, որ «լինես քո անհատականությամբ», լինես քրիստոսակերպ և աստվածաշնչյան վերաբերմունք կիրառես, երբ հանդիմանում ես ինչ-որ մեկին:

## 2. Մարդկանց հանդիմանելու աստվածաշնչյան մեթոդներ:

Աստվածաշնչում կան բազմաթիվ տեղեր, որտեղ հատուկ ցուցումներ կան այն մասին, թե ինչպես հանդիմանել մարդկանց: Առակների գիրքը լեցուն է համարներով, որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերում են մարդկանց հանդիմանելուն կամ խորհուրդ տալուն: Շատ ուրիշ համարներ մեզ ասում են, թե ինչպես խորհուրդ տալ: Դա այն է, ինչ դու անում ես, երբ հանդիմանում ես ինչ-որ մեկին:

Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի չառանձնացնենք որևէ համար և չասենք. «Սա մարդկանց հանդիմանելու աստվածաշնչյան միակ մեթոդն է և պետք է օգտագործվի ամեն անգամ»: Աստված մեզ կարող է օգնել՝ աճել մեր հասկացողության մեջ և իմանալ, թե որ մեթոդն օգտագործենք տարբեր իրավիճակներում: Ահա՛ երեք տեղեր Աստվածաշնչում, որոնք մեզ տալիս են գործնական առաջնորդություն մարդկանց հանդիմանելու վերաբերյալ:

### Ա. Գաղատացիներին 6:1-ի մեթոդը մարդկանց հանդիմանելու համար:

Այս համարն ուղղակի նրանց մասին է, ովքեր մեղք են գործել և խախտել են Աստծո օրենքները:

#### Գաղատացիներին 6:1.

**«Եղբայրներ՛ ռ, եթե մեկը մի հանցանքից հաղթահարվի, դուք որ հոգևոր եք, նմանին վերականգնեք հեգույթյան հոգով՝ ինքներդ զգույշ լինելով, որ դուք էլ փորձության չենթարկվեք»:**

Այս համարն ասում է, որ նրանք, ովքեր «հոգևոր» են, պետք է վերականգնեն նրանց, ովքեր ընկել են մեղքի մեջ: Սա սովորաբար ներառում է հոգևոր առաջնորդներին կամ այլ հոգևոր հասուն քրիստոնյաների: Անգամ այս հոգևոր առաջնորդներին էլ Աստված զգուշացնում է, որ փորձության չենթարկվեն:

Այս համարը մեզ նաև մղում է մարդկանց հանդիմանել նրանց վերականգնելու նպատակով: Մենք պետք է նաև զգույշ լինենք, որ մեղմությամբ հանդիմանենք տվյալ անձնավորությանը:

Ինչպե՞ս կողմնորոշվես, արդյոք դու բավականաչափ «հոգևոր» ես, որպեսզի ինչ-որ մեկին հանդիմանես: Դու կարող ես այս հարցն ուղղել քո հոգևոր առաջնորդին և խորհուրդ ստանալ: Դու նաև կարող ես սա դարձնել քո անձնական աղոթքի թեման և հարցնել Աստծուն, արդյոք պե՞տք է, որ դու հանդիմանես ինչ-որ մեկին, ով մեղք է գործել:

Մեկ այլ բան, որ կարող ես անել, քո հոգևոր առաջնորդի մոտ գնալն ու նրան պատմելն է այն մեղքի մասին, որ դու տեսել ես մեկ ուրիշի կյանքում, և նրանից օգնություն խնդրես, թե ինչպես վարվես տվյալ իրավիճակում:

Եթե մի անձնավորություն անում է մի բան, որ մեղք չէ, ապա նորմալ է, եթե հոգևոր առաջնորդներից բացի մեկ ուրիշն էլ հանդիմանի տվյալ անձին: Օրինակ, Կարինեն իր գործը սխալ է կատարում: Մարիամը՝ Կարինեի նոր ընկերուհին, տեսնում է այդ խնդիրը և ուղղում նրան: Թեև Մարիամը Կարինեի հոգևոր առաջնորդը չէ, նա, ամեն դեպքում, կարող է նրան ուղղել տվյալ իրավիճակում:

### **Բ. Մատթեոս 18:15-17-ի մեթոդը մարդկանց հանդիմանելու համար:**

Մարդկանց հանդիմանելու այս մեթոդը, հավանաբար, Աստվածաշնչի ամենաճանաչված է: Այն երեք քայլերից բաղկացած գործընթաց է առաջարկում մարդկանց հանդիմանելու համար: Այս մեթոդը կարելի է կիրառել ամենատարբեր իրավիճակներում:

#### **Մատթեոս 18:15-17.**

**«Եթե եղբայրդ քեզ դեմ մեղանչի, գնա՛ և հանդիմանի՛ր նրան, երբ դու և նա մենակ եք. եթե քեզ լսի, շահած կլինես քո եղբորը: Իսկ եթե չլսի, ապա քեզ հետ վերցրու մեկ կամ երկու հոգի, որ երկու կամ երեք վկայի բերանով ամեն բան հաստատվի: Իսկ եթե նրանց էլ չլսի, հայտնի՛ր եկեղեցուն, իսկ եթե եկեղեցուն էլ չլսի, թող նա քեզ համար հեթանոսի ու մաքսավորի պես լինի»:**

Առաջինը մենք այստեղ տեսնում ենք, որ այն քրիստոնյա անձնավորությանը հանդիմանելու մասին է: Երկրորդ սահմանափակումն այն է, որ տվյալ անձը մեղք է գործել՝ խախտել է Աստծո օրենքը: Երրորդ սահմանափակումն այն է, որ տվյալ անձնավորությունը քո դեմ է մեղք գործել:

Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի մեզ վրա չվերցնենք պատասխանատվություն՝ ցանկացած մեկին հանդիմանելու, ում կտեսնենք սխալ անելիս: Այս համարը քեզ նման մակարդակի պատասխանատվություն չի տալիս:

Աստվածաշնչյան այս պատկերը վերաբերում է մի իրավիճակի, երբ մարդը մեղք է գործել: Բայց և այնպես, այս պատկերը հրաշալի է՝ ցանկացած իրավիճակում գործածելու, երբ հանդիմանում ես ինչ-որ մեկին: Արա՛ դա առանձին: Միգուցե դու կհիշես ժամանակներ, երբ ինչ-որ մեկը քեզ հանդիմանել կամ քննադատել է ուրիշ մարդկանց ներկայությամբ: Անհարմարության զգացումն ու բարկությունը հավանաբար ավելի մեծ է եղել այդ իրավիճակում, քան եթե տվյալ անձնավորությունը քեզ հետ առանձին խոսեր:

Տվյալ մարդու հանցանքը այլ մարդկանց հետ քննարկելու ցանկության գայթակղությունը կարող է մեծ լինել, նախքան նրան հանդիմանելը: Դե՛ս կանգնիր բամբասանքի գայթակղությանը, քանի որ դու կարող ես փոխել քո կանխակալ կարծիքն այդ դեպքի վերաբերյալ՝ այդ մարդու կողմը լսելուց հետո:

Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի չհամարենք, որ Մատթեոս 18:15-17-ը աստվածաշնչյան միակ մեթոդն է մարդկանց հանդիմանելու համար: Կան նաև այլ մեթոդներ, որոնք ունեն հավասար արժեք մարդկանց հանդիմանելու հարցում:

### **Գ. Բ Տիմոթեոս 3:16-ի մեթոդը մարդկանց հանդիմանելու վերաբերյալ:**

Բ Տիմոթեոս 3:16-ը կարդալիս դու անմիջապես կնկատես, որ այն ուղղակի չի խոսում այն մասին, թե ինչպես մարդիկ պետք է հանդիմանեն մեկը մյուսին: Այս համարի համատեքստը քննարկում է, թե ինչպես կարող է Աստվածաշունչն օգտագործվել քրիստոնյայի կյանքում: Բայց և այնպես, այս համարի մեջ կան չորս առանցքային կետեր, որոնք մեզ տալիս են աստվածաշնչյան հրաշալի սկզբունքներ մարդկանց հանդիմանելու համար:

#### **Բ Տիմոթեոս 3:16.**

**«Ամբողջ Գիրքն Աստծո շունչն է և օգտակար վարդապետության, հանդիմանելու, ուղղելու և արդարությամբ խրատելու համար»:**

#### **Բ Տիմոթեոս 3:16.**

**«Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է, և օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, շիտկելու և արդարության խրատելու համար» (Արևմտահայերեն թարգմանություն):**

Ահա չորս հնարավոր մոտեցումներ մարդկանց հանդիմանելիս.

- (1) Սովորեցնել ճշմարտությունը,
- (2) Հանդիմանել հանցանքները,
- (3) Ուղղել թերությունները (վերականգնել մարդու կյանքի ուղղությունը),
- (4) Խրատել՝ ճիշտ կյանք ապրելու համար (վարժել բարի կյանքի մեջ):

Եթե մենք ուսումնասիրենք Հիսուսի մեթոդները, որոնք Նա կիրառում էր մարդկանց հանդիմանելիս, ապա կհայտնաբերենք, որ Նա նման դեպքերում օգտագործում էր այս մեթոդներից մեկը կամ մի քանիսը: Երբ օրինաց մի վարդապետ փորձում էր շփոթեցնել Հիսուսին (Ղուկաս 10:25-37), Հիսուսը չհանդիմանեց նրան իր սխալ դրդապատճառների համար: Նա օգտագործեց (1) և (4) մեթոդները:

Քննարկման սկզբում Հիսուսն օգտագործեց «սովորեցնել ճշմարտությունը» մեթոդը և քննարկեց աստվածաշնչյան ճշմարտություններ, որոնք վերաբերում էին այդ մարդու հարցին: Հիսուսն այդ մարդու պատասխանից տեսավ (համար 29), որ նա դեռ չէր թողել իր սխալ մոտեցումը: Դրա համար Նա պատմեց Բարի Սամարացու պատմությունը, որը (4) մեթոդի օրինակ է՝ «Խրատել՝ ճիշտ կյանք ապրելու համար»:

40-42 էջերում քննարկված երեք հիմնական գործոնները մեծապես կազդեն այն բանի վրա, թե այս չորս մեթոդներից որը դու կօգտագործես ինչ-որ մեկին հանդիմանելիս: Հիսուսը շատ զգայուն էր, երբ ինչ-որ մեկին հանդիմանում էր: Նա ընտրում էր այն մեթոդը, որը կօգներ տվյալ անձնավորությանը, այլ ոչ թե պարզապես կբացահայտեր նրա խնդիրը:

Մեզնից շատերի համար դժվար կլինի օգտագործել (2) մեթոդը՝ «Հանդիմանել հանցանքները»: Հնարավոր է՝ դու լսել ես, որ ինչ-որ մեկն ասել է. «Վերջիվերջո նա սխալ է: Բոլորը պետք է դրա մասին իմանան, հատկապես այդ անձնավորությունը, ով հանցավոր է: Նա պետք է պատասխան տա իր հանցանքի համար»: Մենք պետք է հմտություններ զարգացնենք, թե ինչպես կիրառել մարդկանց հանդիմանելու մյուս երեք մեթոդները: Այդ դեպքում գուցե կարիք չի լինի, որ մենք այդքան հաճախ հանդիմանենք մարդկանց:

Ավելի մանրամասն դիտարկենք Բ Տիմոթեոսի 3:16-ի այս չորս մոտեցումները:

## 1. Սովորեցնել ճշմարտությունը:

Այստեղ մոտեցումն այն է, որ սովորեցնենք աստվածաշնչյան պարզ ճշմարտություններ, որոնք կապ ունեն տվյալ անձնավորության կյանքի հետ: Երբեմն նորադարձ քրիստոնյաները սխալներ են թույլ տալիս և թերություններ են ունենում այն պատճառով, որ չգիտեն, թե Աստված ինչ է ուզում, որ նրանք անեն: Որոշ դեպքերում կարիք կլինի, որ դու օգնես տվյալ անձնավորությանը՝ տեսնել, թե ինչպես է տվյալ ճշմարտությունը վերաբերում իր կյանքին:

## 2. Հանդիմանել հանցանքները:

«Մի՛ արա». սա ծնողների կողմից օգտագործվող սովորական հանդիմանություն է: Որոշ դեպքերում այն բավարար է: Երեխան մտածում է, որ պետք է անի, սակայն այս կարճ հանդիմանությունը երեխային ուղղում է դեպի ճիշտ դիրք:

Մենք պետք է զգույշ լինենք, թե ինչպես ենք մարդկանց հանդիմանում, հատկապես՝ պատանիներին և չափահասներին: Հասարակ նկատողությունը կարող է կտրուկ լինել և վիրավորել այն անձնավորությանը, ում մենք ուզում ենք ուղղել: Հանդիմանության մյուս մեթոդները հաճախ ավելի շատ ժամանակ են պահանջում և ավելի բարդ են, սակայն արդյունքը շատ ավելի լավ է լինում:

## 3. Ուղղել թերությունները:

Այս մեթոդը նկարագրելու այլ կերպ էլ կարող է լինել՝ «Վերականգնել մարդու կյանքի ուղղությունը»: Հանդիմանության այս մեթոդը հիմնականում կենտրոնանում է այն խնդիրն ուղղելու վրա, որն առաջացել է տվյալ մարդու սխալ արարքի պատճառով:



Եթե դու ճանապարհորդության մեջ ես և սխալ ուղղություն ես վերցրել, քո առաջին գործը կլինի ճիշտ ճանապարհին վերադառնալը: Ընդամենն իմանալը, թե որն է ճիշտ ճանապարհը, չի լուծի քո խնդիրը: Դու պետք է կողմնորոշվես, թե ինչպես պետք է վերադառնաս այդ ճիշտ ճանապարհին:

Հանդիմանության այս մեթոդն օգտագործելիս մենք ուզում ենք օգնել տվյալ անձնավորությանը՝ վերադառնալ ճիշտ ուղու վրա: Դու կարող ես նաև ժամանակ հատկացնել և նրան ցույց տալ, թե նա ինչ կանխարգելիչ քայլեր պետք է կատարի, որպեսզի նույն բանը նորից տեղի չունենա:

Կարող ես այս մեթոդը համեմատել նաև խոհարարի աշխատանքի հետ: Եթե մարդը սնունդը ճիշտ պատրաստի, նրա կերակուրը վառված չի լինի: Սակայն եթե գազի հոսքը գազօջախին ճիշտ միացված չլինի, ամեն անգամ այն միացնելիս կարող է վտանգավոր պայթյուն լինել: Արագ լուծումը կրակը հանգցնելն է: Սակայն ավելի երկարաժամկետ լուծումն այն է, որ գազը գազօջախին ճիշտ միացված լինի, և կերակուր պատրաստելու համար ապահով մեթոդներ կիրառվեն:

Որոշ մարդիկ արդեն գիտեն, թե ինչպես ճիշտ ապրել: Բայց խոհարարի նման նրանք էլ կարիք ունեն ուղղելու որոշ խնդիրներ, որոնք խանգարում են նրանց՝ հաջողության հասնել:

#### **4. Խրատել՝ ճիշտ կյանք ապրելու համար:**

Այս մեթոդը կարող է ձևակերպվել նաև որպես՝ «վարժել բարի կյանքի մեջ»: Հանդիմանության այս մեթոդը նպատակաուղղված է՝ օգնել մարդկանց, որպեսզի ամեն օր շարունակ ճիշտ ապրեն: Նորադարձ քրիստոնյաները կարիք ունեն հասկանալու, թե ինչպես շարունակաբար ապրեն հաստատուն քրիստոնեական կյանք:

Հանդիմանության այս մեթոդը կարող է համեմատվել ինչ-որ մեկին սովորեցնելու հետ, օրինակ, թե ինչպես ճիշտ խոհարարություն անի, որպեսզի կրակ չբռնկվի, իսկ ուտելիքն էլ հրաշալի համ ունենա:

Երբեմն սխալ արած մարդուն օգնելու լավագույն ճանապարհը նրան ցուցումներ տալն է, թե ինչպես ճիշտ ապրի: Տո՛ւյց տուր այս անձնավորությանն աստվածաշնչյան այն հատուկ համարները, որոնք վերաբերում են նրա խնդրին: Օգնի՛ր նրան տեսնելու, թե ինչպես այդ ճշմարտությունները, եթե գործի դրվեն, կօգնեն նրան այնպես ապրել, որ հաճեցնի Աստծուն և չվնասի մարդկանց:

Բ Տիմոթեոս 3:16-ում տրված հնարավոր չորս մոտեցումները կարող են օգտագործվել առանձին-առանձին կամ միասին: Սուրբ Հոգին կարող է քեզ օգնել՝ հասկանալու, թե ո՞ր մոտեցումն օգտագործես ինչ-որ մեկին հանդիմանելիս: Բայց և այնպես, կարևոր է հմտություններ զարգացնելը՝ օգտագործելու համար բոլոր չորս մոտեցումներն էլ:

## Դ. Որո՞նք են ամենագլխավոր բաները մարդկանց հանդիմանելու հարցում:

Ահա՛ ևս մի քանի ցուցումներ, որոնք քեզ կօգնեն հաջողության հասնել մարդկանց հանդիմանելիս:

### 1. Մոտեցի՛ր տվյալ անձնավորությանը՝ իրականությունն իմանալու ցանկությամբ:

Համոզվա՛ծ եղիր, որ քո դրդապատճառները մաքուր են: Եթե դու, իրոք, ուզում ես հետևել Աստվածաշնչի երկրորդ մեծ պատվիրանին, ուրեմն հիմա ցույց տուր դա քո պարզ սիրով այդ անձնավորության հանդեպ: Եթե մարդիկ ինչ-որ բան սխալ են արել, դու պետք է սիրով վերականգնես և ուղղես նրանց: Իսկ եթե նրանք սխալ բան չեն արել, այլ բամբասանք կամ թյուրիմացություն է տեղի ունեցել, ապա դու քեզնից կախված ամեն բան պետք է անես, որպեսզի պարզաբանես դա: Հետևի՛ր Հակոբոս 1:19-ի խորհրդին և փութաջա՛ն եղիր՝ լսելու համար պատմության նրանց կողմը:

### 2. Մոտեցի՛ր տվյալ անձնավորությանն ազատ մտքով:

Ինքդ քեզ ասա՛. «Ես դեռ չեմ լսել այս պատմության բացատրությունը նրա կողմից»: Բաց հարցե՛ր տուր և թո՛ւյլ տուր նրան՝ բացատրել, թե ինչ է տեղի ունեցել: Մի՛ տուր փակ հարցեր, օրինակ՝ «Դու խախտել ես այս կանոնը, այնպես չէ՞»: Եթե այդպիսի հարցեր տաս, նա կմտածի, որ դու արդեն կարծիք ես կազմել նրա մեղավորության վերաբերյալ:

### 3. Մի՛ շտապիր եզրակացություններ անել:

Չսպի՛ր եզրակացություններդ, քանի դեռ մինչև վերջ չես լսել այդ պատմությունը նրա կողմից: Եթե դու տվյալ անձնավորությանը մոտենում ես արդեն կարծիք կազմած՝ որ նա մեղավոր է, հնարավոր է՝ հետագայում պարզես, որ սխալ մարդու ես մեղադրել: Այս մեթոդին հետևողական լինելը կարող է նաև կանխել այն, որ չխոսենք բաներ, որի համար հետո կզղջանք:

### 4. Քո մոտեցման մեջ դրակա՛ն եղիր:

Մոտեցի՛ր տվյալ անձնավորությանը ձայնի բարեկամական, դրական տոնայնությամբ: Ինչպե՛ս ես ասում, դա ճիշտ այնքան կարևոր է, որքան՝ ի՛նչ ես ասում: Ոսկե կանոնն այստեղ հրաշալի կերպով համապատասխանում է. խոսի՛ր մարդկանց հետ այնպես, ինչպես դու կցանկանայիր, որ նրանք խոսեն քեզ հետ, եթե դու մեղք գործած կամ սխալված լինեիր: Հակոբոս առաքյալի խորհուրդը նույնպես շատ օգտակար է. «**Խոսելու մեջ ծանրաշա՛րժ եղեք**» (Հակոբոս 1:19):

## 5. Մի՛ վերաբերվիր՝ «Ես ճիշտ եմ, դու սխալ ես» մոտեցումով:

Եթե տվյալ անձնավորությանը վերաբերվում ես «Ես ճիշտ եմ, դու սխալ ես» մոտեցումով, դու ընդամենը խնդիրներ կունենաս: Եթե այդպիսի մոտեցում ունենաս, և տվյալ անձնավորությունը համաձայն չլինի քեզ հետ, վեճն ու բարկությունը կարող են կործանել ցանկացած դրական օգուտ, որ կարող էր առաջանալ այդ մարդուն հանդիմանելու արդյունքում: Հիշի՛ր Գաղատացիներին 6:1-ի խորհուրդը, որ մենք պետք է «հեզության հոգով» մոտենանք, երբ փորձում ենք վերականգնել մեղք գործած անձնավորությանը:

## 6. Ի՞նչ անեմ, եթե նրանք չընդունեն իմ հանդիմանությունը:

Պատահե՞լ է, որ փորձել ես հանդիմանել ինչ-որ մեկին, և ամբողջ իրավիճակը դեմ է դուրս եկել քեզ: Հնարավոր է՝ նրանք մերժել են քեզ լսել: Կամ նրանք ստել են քեզ և հերքել քո ասածները նրանց արարքների վերաբերյալ: Կամ, միգուցե, նրանք իրենք են սկսել հանդիմանել քեզ, երբ դու փորձել ես նրանց հանդիմանել:

Դու պետք է զգույշ լինես և չհարկադրես քո հանդիմանությունը որևէ անձնավորության: Աստված մեզ ասում է՝ ճշմարտությունը խոսել սիրով: Եթե տվյալ անձնավորությունը մերժում է քեզ լսել, իսկ նրա արածը լուրջ սխալ է, ապա Մատթեոս 18:16-ը քեզ ասում է, որ գնաս և մեկ ուրիշին էլ քեզ հետ վերցնես՝ տվյալ անձնավորության հետ խոսելու համար: Փորձի՛ր այնպիսի մեկին քեզ հետ վերցնել, ով հարգված է տվյալ անձնավորության կողմից, նրա, ում դու փորձում ես հանդիմանել: Բայց ամենից առավել պետք է համոզված լինես, որ անում ես այն, ինչ Աստված է ուզում, որ դու անես:

## Ե. Որո՞նք են աստվածաշնչյան սահմանափակումները մարդկանց հանդիմանելու հարցում:

Աստվածաշունչը հստակորեն խոսում է մարդկանց հանդիմանելու հարցում մեր պատասխանատվության մասին, երբ նրանք ինչ-որ բան սխալ են անում: Բայց Աստվածաշունչը որոշ սահմանափակումներ է դնում քրիստոնյաների վրա այս ասպարեզում: Երբ դու տեսնում ես մեկին, որ սխալ բան է անում, պետք է արագ վերանայես աստվածաշնչյան հետևյալ սահմանափակումները՝ նախքան տվյալ անձնավորությանը հանդիմանելը:

## 1. Ես ունե՞մ նույն խնդիրը:

Պատճառներից մեկը, որ ուրիշի կյանքում որևէ խնդիր արագ ենք նկատում, այն է, որ մենք էլ ունենք նույն խնդիրը: Մատթեոս 7:1-5-ը հստակ ցուցումներ է տալիս այս մասին:

**Մատթեոս 7:3-5.**

«Եվ ինչո՞ւ եղբորդ աչքի միջի շյուղը տեսնում ես, բայց քո աչքի միջի գերանը չես նկատում: Կամ ինչպե՞ս կարող ես եղբորդ ասել. «Թող աչքիցդ շյուղը հանեմ. և ահա քո աչքի մեջ գերան կա»: Կեղծավո՞ր, նախ քո աչքի միջի գերա՛նը հանիր և հետո հստակ կտեսնես՝ եղբորդ աչքից շյուղը հանելու համար»:

«Բայց ոչ ոք էլ կատարյալ չէ,- կասես դու,- արդյո՞ք սա նշանակում է, որ միայն թերությունն չունեցող մարդիկ կարող են հանդիմանել մյուսներին»: Ո՛չ, սակայն պատկերը հստակ է: Հո՛գ տար քո սեփական խնդրի համար՝ նախքան ինչ-որ մեկին, ով ունի նույն խնդիրը, հանդիմանելը:

«Արդյո՞ք դա նշանակում է, որ ես պետք է անտեսեմ այդ մարդու արած թերությունը, եթե ինքս էլ ունեմ նույն խնդիրը»: Ո՛չ, չպետք է անտեսես: Հնարավոր է՝ դու կարողանաս օգնել տվյալ անձնավորությանն առանց ուղղակիորեն նրան ընդդիմախոսելու: Օրինակ, դու կարող ես գնալ այդ անձնավորության մոտ ու ասել, որ խնդիր ունես: Հարցրո՛ւ նրան. «Կարո՞ղ ես դու ինձ օգնել այս խնդրին լուծում գտնելու համար»:

Դուք երկուսդ էլ կարող եք պատասխան գտնել ձեր խնդրի համար, եթե միասին գործեք: Այս ձևով դու օգնում ես տվյալ անձնավորությանն առանց ուղղակիորեն նրան ընդդիմախոսելու իր խնդրի վերաբերյալ:

## 2. Երեխաները չպետք է հանդիմանեն իրենց ծնողներին:

Հիշի՛ր, մարդկանց հանդիմանելը մեզ տրված *պատասխանատվություն* է: Դա իրավունք կամ ազատություն չէ, որ մենք ունենք: Աստված քո ծնողներին տվել է պատասխանատվություն՝ ուղղելու քեզ, երբ դու սխալ լինես: Ընտանիքների մեծ մասում ծնողներն իրենց երեխաներին իրավունք չեն տալիս՝ ուղղելու ծնողներին:

Կարող են լինել դեպքեր, երբ Աստված իսկապես կամենա քո միջոցով ինչ-որ բան ասել քո ծնողներին: Համոզվի՛ր, որ իրո՞ք Աստված է ուզում, որ դու դա ասես: Խիստ մի՛ հանդիմանիր նրանց: Օգտագործի՛ր այս մեթոդներից մեկը՝ նրանց ուղղելու համար:

### 3. Հավասարակշռություն քրիստոնեական կյանքում:

Քրիստոնեական կյանքն ավելին է, քան հանդիմանելն ու հանդիմանություն ընդունելը: Ցանկացած լավ բան կարող է չարաշահվել և չափից ավելի օգտագործվել: Աստված ոչ ոքի չի նշանակել որպես Իր հատուկ գործակալի, որպեսզի օրը 24 ժամ հանդիմանի մարդկանց: Եթե չափից ավելի խիստ նայես, միշտ էլ ցանկացած մարդու մեջ սխալ բան կգտնես:

Աստված ուզում է, որ մենք սիրով և խաղաղությամբ լեցուն կյանք ապրենք: Նկատի՛ր այն լավ բաները, որ մարդիկ անում են: Ընդունի՛ր մարդկանց այնպիսին, ինչպիսին նրանք կան՝ անկախ նրանց թերություններից: Կա ժամանակակից ասացվածք, որ այստեղ տեղին է. «Խնդրում եմ, համբերատա՛ր եղիր, Աստված դեռ Իր գործը չի վերջացրել ինձ հետ»:

### 4. Մենք պետք է ճիշտ դրդապատճառներ ունենանք:

Աստծո դրած սահմանափակումներն այս հարցում հստակ են: Այն ամենը, ինչ մենք անում ենք, պետք է փառք բերի Աստծուն:

**Ա Կորնթացիներին 10:31.**

**«Ուրեմն, թե՛ ուտեք, թե՛ խմեք և թե՛ ցանկացած գործ, որ անում եք, ամեն ինչ արե՛ք Աստծո փառքի համար»:**

Եթե քո նպատակը վրեժ լուծելն է կամ ինչ-որ մեկին ցավեցնելը, ապա դու Աստծո կամքի մեջ չես լինի, երբ մեկին հանդիմանես: Երբեմն հեշտ է մեր գործողություններն արդարացնել և ասել, որ դա անում ենք տվյալ մարդու լավի համար: Մենք պետք է ուշադիր և խորամուխ լինենք, երբ նայում ենք մեր դրդապատճառներին: Համոզվի՛ր, որ քո դրդապատճառն Աստծուն փառք բերելն է:

### 5. Արդյո՞ք ես խնդրի մի մաս չեմ:

Եթե դու ես պատճառ հանդիսացել, որ ինչ-որ մեկը սխալ բան անի կամ հայտնվի սխալ ուղու վրա, չպետք է փորձես հանդիմանել նրան: Օրինակ, եթե դու անհամաձայնություն ես ունեցել տվյալ մեկի հետ և սկսել ես վիճաբանել, չպետք է փորձես նրան ասել, որ նա սխալ է անում քեզ հետ վիճաբանելով: Չէ՞ որ ցանկացած վեճի մեջ էլ երկու մարդիկ են ներգրավված:

Եթե դու ինչ-որ ձևով կապ ունես տվյալ խնդրի հետ, ապա, առաջին հերթին, քո պատասխանատվությունն է՝ գնալ տվյալ մարդու մոտ, խոստովանել սեփական սխալն ու ներում խնդրել: Դու չես կարող ազատորեն հանդիմանել նրան, եթե ինքդ հանդիսանում ես տվյալ խնդրի մի մասը:

## 6. Ես պե՞տք է ուղղեմ իմ առաջնորդներին:

Ի՞նչ անել, եթե քո աշխատանքային ղեկավարն ինչ-որ բան սխալ է արել: Դու պատասխանատվություն ունե՞ս նրան հանդիմանելու: Այս հարցի առանցքային բառը «պատասխանատվությունն» է: Շատ ասպարեզներում դու չես ունենա պատասխանատվություն՝ հանդիմանելու քո առաջնորդին: Քո առաջնորդներն են միայն, որ կարող են քեզ ասել, որ դա անես:

Եթե քո առաջնորդն անում է մի բան, որն ուղղակիորեն խախտում է քո երկրի օրենքները, ապա դու պետք է լրջորեն խորհես, թե ինչպես կարող ես լուծման մեջ մասնակցել: Տարբերակներից մեկը Մատթեոս 18-ի նկարագիրն է, երբ պետք է գնալ և առանձին խոսել տվյալ անձնավորության հետ՝ փորձելով լուծել առկա խնդիրը: Եթե դա քեզ չհաջողվի, ապա վերցրո՛ւ ևս երկու հոգի, ովքեր տեղյակ են խնդրից, և դիմի՛ր տվյալ մարդուն՝ խնդիրը պարզաբանելու համար: Եթե չստացվի, ապա դու կարող ես մտածել այն մասին, որ գնաս տվյալ մարդու ղեկավարի մոտ, կամ, միգուցե, ոստիկանություն: Դու պետք է լրջորեն ծանրութե՞թն անես քո գործողությունների հետևանքները և գիտակցես, որ կարող ես կորցնել աշխատանքը: Եթե ի վիճակի չես այդ հարցը լուծելու, կարող ես որոշել, որ լավագույն այլընտրանքը աշխատանքից դուրս գալն է:

Եթե աշխատում ես քրիստոնեական որևէ ծառայության համար, կամ եթե քո ղեկավարը քրիստոնյա է, մարդկանց հանդիմանելու հարցը մի փոքր բարդանում է: Երբեմն քրիստոնեական կազմակերպության առաջնորդները խորհրդատուներ կամ իրենց մոտ կանգնած մարդիկ չեն ունենում: Միայն աշխատողներն են, որ կարող են նկատել, որ իրենց առաջնորդն ինչ-որ բան սխալ է արել: Արդյոք կարիք կա՞, որ աշխատողները գնան և մյուսներին պատմեն իրենց առաջնորդի սխալների մասին: Կան իրավիճակներ, երբ կարիք է լինում նախապես խորհուրդ հարցնել՝ նախքան որոշելը, թե ինչպես արձագանքել տվյալ պարագայում: Որոշ դեպքերում քո կողմից ճիշտ կլինի գնալ առաջնորդի մոտ և ասել նրան իր սխալի մասին: Համոզվի՛ր, որ Տերն է քեզ առաջնորդում դա անելու համար: Զգո՛ւյշ եղիր, թե ինչպես ես խոսելու քո առաջնորդի հետ: Նրա մեղքի համար նրան խիստ հանդիմանելը գուցե լավագույն մոտեցումը չլինի քո կողմից: Հնարավոր է՝ ինչ որ դու ասես, ճիշտ է, սակայն, եթե նա չընդունի, դու կարող ես կորցնել քո աշխատանքը:

Եթե դու նորադարձ քրիստոնյա ես, ապա այս ասպարեզում քեզ համար սահմանափակումներն ավելի շատ են: Միայն ծայրահեղ դեպքերում պետք է ուղղես քո առաջնորդին: Եթե ուզում ես, կարող ես խորհուրդ հարցնել ավելի տարիքով քրիստոնյաներից՝ նախքան քո առաջնորդին մոտենալը:

## 7. Դու բավականաչափ հոգևոր ես, որպեսզի մարդկանց հանդիմանես:

Նախկինում մենք խոսեցինք Գաղատացիներին 6:1-ում տեղ գտած ճշմարտությունների մասին: Այնտեղ ասվում է. «Եղբայրներ՝ ր, եթե մեկը հանկարծ մի հանցանքից հաղթահարվի, դուք, որ հոգևոր եք, նմանին վերականգնե՛ք...»: Այս համարը սահմանափակում է դնում, թե ով պետք է հանդիմանի մյուս քրիստոնյաներին՝ «դուք, որ հոգևոր եք»:

«Չոգևորապես աճած քրիստոնյաներ». սա միգուցե ավելի լավ է բացատրում, թե ով պետք է հանդիմանի մարդկանց: Նրանք, ովքեր հոգևորապես աճած են, մտերիմ հարաբերություններ ունեն Աստծո հետ և պետք է որ ավելի զգայուն լինեն Սուրբ Հոգու առաջնորդության հանդեպ: Նրանք, սովորաբար, ավելի մեծ փորձ ունեն մարդկանց աստվածաշնչյան մեթոդներով հանդիմանելու հարցում: Այսինքն, եթե որևէ խնդիր է առաջանում, և մի ավելի տարիքով քրիստոնյա է ներկա, թո՛ւյլ տուր, որ նա ուղղի իրավիճակը:

## Եզրակացություն

Մեր վերաբերմունքները շատ կարևոր դեր են խաղում մեր առօրյա գործունեության մեջ: Նորադարձ քրիստոնյաները պետք է զգուշությամբ գնահատեն իրենց վերաբերմունքները՝ տեսնելու համար, թե արդյո՞ք իրենք համապատասխանում են Աստծո Խոսքի չափանիշին: Աստված մեզ խոստացել է օգնել, որ աճենք: Չկա այնպիսի վերաբերմունք, որ Աստծո օգնությամբ անհնարին լինի փոխել:

Երբ մենք սխալվում ենք և մեղք գործում, պետք է աստվածաշնչյան վերաբերմունքով արձագանքենք, երբ որ մեզ հանդիմանեն: Կարող են ամիսներ պահանջվել, նախքան դու կսովորես աստվածաշնչյան մտածելակերպով պատասխանել, սակայն մի՛ վհատվիր, շարունակի՛ր աշխատել այդ ուղղությամբ:

Մենք կհանդիպենք իրավիճակների, երբ ստիպված կլինենք հանդիմանել մարդկանց, ովքեր ինչ-որ բան սխալ են արել: Ուրիշներին, ովքեր սխալներ են արել, աստվածաշնչյան մոտեցմամբ հանդիմանելը քեզ կօգնի ավելի հեշտությամբ նույնպիսի աստվածաշնչյան վերաբերմունքով արձագանքել հանդիմանությանը: Աստծո խոստումը հստակ է. «Ես կարող եմ ամեն ինչ անել Քրիստոսի միջոցով, որ գորացնում է ինձ» (Փիլիպպեցիներին 4:13):